




Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտերմագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով


This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported CC BY NC SA License.


Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ժամկետային ձևաչափով կամ կապով
ձևաչափերի կամ ոչ/ապրիլի ամիս նյութը ստեղծելու իրավունք ունի

You are free to:

Share – copy and redistribute the material in any medium or format
Adapt – remix, transform, and build upon the material





ԱՇՈՏ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՄԵՐ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

ՅԵՎ,

ԼԵՆԻՆԻԶՄԸ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ—1926

478



3KՈՂ-10

ՍՏՈՒԳԼՍԻ Է 1961 թ.

ՄԵՐ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

ՅԵՎ


ԼԵՆԻՆԻԶՄԸ

ՀԱՅԿ (Բ) XIV ՀԱՄԱԴՈՒՄԱՐԻ ԸՆԴՈՒՆԱԾ ՎՈՐՁՈՒՄՆԵՐԻ ԱՌԹԻՎ)



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ - 1926



A $\frac{\pi}{7808}$

Գրառնագիր № 452 (բ.).

277

Տիրաժ 3000

Յերեվան, Պետհրատի 2-րդ տպարան պ. 649

ՄԵՐ ՎԱՐԱՆՈՒՄՆԵՐԸ ՆԵՊ-Ի ՇՐՋԱՆՈՒՄ

Մեր քաղաքականության հիմնական հարցը չերկրի հասարակական զարգացման ընթացքի պրոբլեմն է: Դեպի ո՞ւր—ահա հիմնական հարցը: Վո՞ր չափով են մեր պարտություններն ու հաղթանակները մեզ հեռացնում Հոկտեմբերի գծագրած հեռանկարներից, կամ մոտեցնում այդ հեռանկարներին—ահա հարցի կոնկրետ բովանդակությունը:

Հարցը բնական է և անխուսափելի՝ մանավանդ նոր տնտեսական քաղաքականության շրջանում: Մեր զարգացումը ՆԵՊ-ի շրջանում չի դնում ուղղաձիգ: Նա ունի կորընթաց ուղղություն: Մեր վերելքն ընթանում է հակասական ձևվերով, նա լի չե ներքին քաղխումքներով, պայքարներով: ՆԵՊ-ը զարկ է տալիս մեր տնտեսության սոցիալիստական կուտակմանը, ամրացնում մեր քաղաքականության պրոլետարական պատվանդանը: Բայց վորոշ սահմաններում նա հանդուրժում է նաև կապիտալիստական տարերքը չերկրի տնտեսության մեջ, զարկ տալիս կապիտալիստական կուտակմանը, հասարակական ազդեցության ասպարեզ մատակարարում նոր բուրժուազիային, կապիտալիզմին: «Ո՞վ ում»: Այսպես է բնորոշել մեր վարած ներքին պայքարը ՆԵՊ-ի շրջանում նոր տնտեսական քաղաքականության հեղինակը՝ ընկ. Լենինը: Դեպ ո՞ւր—այս հարցն ինքնին դրված է ՆԵՊ-ի հիմքերում, բըղխում է նոր տնտեսական քաղաքականության շրջանի մեր զարգացման ներքին իմաստից:

Զուր չե, վոր տակա՞րն 1921 և 1922 թվականներին, չերբ կուսակցությունը դեռ նոր էր թեակոխում ՆԵՊ-ի շրջանը, բնական և անխուսափելի այդ հարցն առաջ բերեց կուսակցության ներսում վորոշ չերկմտանք: Պատահական չե, վոր կուսակցական մի քանի

ընկերներ, թարգման հանդիսանալով ժամանակի ձևակերպվող վարանումներին, ծառանում ելին փաստորեն ՆԵՊ-ի դեմ, նկատում այն ընդհանուր նահանջ կուսակցության առաջադրած հիմնական նպատակից: Անգիտանալով ՆԵՊ-ի անհրաժեշտությունը, չնկատելով նրա կարևորությունը մեր զարգացման սոցիալիստական հեռանկարներն ապահովելու տեսակետից և մանավանդ սինդիկալիստական իրենց մտայնությունը արհամարհելով միանգամայն գյուղացիության գոյությունը և գյուղացիության հետ մեր կնքած զաւիճի նշանակությունը՝ այդ ընկերները խոսում ելին «արդյունարեբություն վերասերման» (перерождение промышленности), խորհուրդների և պրոֆմիությունների մեջ որ ըստ որե աճող բյուրոկրատացման, կուսակցության բանվորական մասսայից կտրվելու, նրա սոցիալական վերասերման վտանգի, կենտկոմի քաղաքականություն վրա «մեշհանական միջավայրի արած բացասական ազդեցություն» մասին և այլն: Այսպես՝ դեռ այն ժամանակ, չերբ դեռ նոր ելինք մուծում ՆԵՊ-ը, յերբ կուսակցության կենտկոմի քաղաքականությունը ղեկավարում եր անմիջապես Վ. Ի. Լենինը:

Հետագա տարիներում ակնբախ դարձան ՆԵՊ-ի արդյունքները: ՆԵՊ-ի շնորհիվ կարողացանք ամրացնել մեր տնտեսության պրոլետարիատի ձեռքով նվաճված հրամայող բարձրությունները և դրանով նյութական պատվանդան ստեղծել չերկրի սոցիալիստական շինարարության համար: Հետզհետե ամրանում եր բանվորության և գյուղացիության դաշինքը, առանց վորի հնարավոր չեր մեղանում պրոլետարիատի դասակարգային դիկտատուրան: Պրոլետարիատի դասակարգային կոնսոլիդացիան դուռ եր բացում կուսակցության մասսայական աշխատանքի համար և դրանով ապահովում նրա պրոլետարական ղեկավարությունը: Հանգամանքներ են սրանք, վոր աներկրա ելին դարձնում կուսակցության ընդգրկած գծի ճշտությունը և ներշնչում մասսաներին վստահություն դեպի մեր վարած քաղաքականությունը: Սակայն ՆԵՊ-ի պայմաններում դրան զուգընթաց աճում ելին հարաբերաբար նաե բացասական այն ուժերը, վոր զարնվելով շատերի նրբացած նյարդերին՝ տենդագին բնույթ ելին հաղորդում քաղաքական նրանց տարակուսանքներին: Առանձնապես հախուռն արտահայ-

տությունն ելին գտնում այդ տարակուսանքներն ամեն անգամ, յերբ մեր տնտեսության ներսում զարգացման հակասական ընթացքի բերումով, առաջանում եր ճգնաժամային դրություն, յերբ, որեմն, կապիտալիստական տարերքի սպառնալիքը չերկրի տնտեսական կյանքում դառնում եր ավելի անմիջական, ավելի համարձակ: Ներքին այս դժվարություններն ու բաղխումներն առաջացնում ելին տագնապային վիճակ կուսակցության ներսում: Տնտեսական ճգնաժամը հաղթահարելու համար՝ կուսակցությունը փնտրում ե նահանջի կամ հարձակման մասնավոր ուղիներ, յեւրակեալ վորոնում անկյունադարձային մասնավոր շարժումների համար, կարճ՝ նա ճշտում ե իր **սակսիկան**: Յեւ ահա, անոգ ստեղծված ճգնաժամի հանդեպ կամ անկարող ըմբռնելու տակտիկական նոր գործողությունների իմաստը, կուսակցության վորոշ շերտերի մեջ տարակուսանք ե առաջանում նորից քաղաքական մեր **սրահեգիայի**, **ընդհանուր** մեր ուղեգծի, **ՆԵՊ**-ի ճշտության մասին: Կրկին ե դարձյալ հին հարցը՝ չե՞նք շեղվում արդյոք նպատակից, չե՞նք լքում արդյոք պրոլետարական հեղափոխության գլխավոր գիրքերը, հարկ չկա՞ արդյոք քաղաքական մեր գծի հիմնական ռեվիզիայի:

Այս ե նման հարցերն են, վոր ձևակերպում եր 1923—24 թվականներին **սրոցկիսական ոպպոզիցիան**: Հարկավ, այստեղ չեր բացասվում **ուղղակի** նոր տնտեսական քաղաքականությունը, չեր անգիտացվում հիմնովին նաե գյուղացիության հետ կնքած դաշինքը, ինչպես այդ տեղի ունեւր փաստորեն 21—22 թվականներին: Դրա փոխարեն անկասկած ե գյուղացիության **քերագնահատումը**, չկար նաե հստակ ու մեկին **ըմբռնումն** այն վարքագծի, վոր ընձեռնելու յեր կուսակցությունը տնտեսական քաղաքականության բնագավառում: Այսպէս՝ ժողովրդական մեր ներկա տնտեսությունը պետական պլանի միջոցով ամբողջովին ընդգրկելու խնդրում: Ինչպես բնորոշում եր 23 թվի տրոցկիստական **ոպպոզիցիայի** յելույթը կուսակցության 13-րդ կոնֆերանսը, «**ոպպոզիցիայի** մի մասն առատ տուրք ե տալիս ընդհանրապէս **ՆԵՊ**-ի դեմ ուղղված «ձախ» ֆրազին, անելով այնպիսի հայտարարություններ, վոր կարող ելին վորեւ իմաստ ունենալ միայն

այն դեպքում, չեթե այդ ընկերներն առաջարկ մտցնեյին հրաժար-
վել ՆԵՊ-ից և վերադառնալ դեպի ռազմական կոմմունիզմ: «Ջախե-
րը» սակայն, չնչին ազդեցություն ունեցին ռազմակցության ներսում.
ավելի շեշտված եր այն մտայնությունը, վոր կուսակցությունը
բավականաչափ զիջող ընթացք չունի արտասահմանյան կապիտալի
հանդեպ, վոր անհրաժեշտ ե դյուրացնել ապրանքային ինտեր-
վենցիան» և այլն: Տեսակետ, վոր մատնում եր ռազմակցության շի-
վար կացությունը կապիտալիստական աշխարհում սկսվող «պացի-
ֆիստական երայի» հանդեպ և, վոր գլխավորն ե՝ գյուղացության
վերաբերմամբ մեր տանելիք քաղաքականության ճիշտ չափանշի
բացակայություն: Թերագնահատելով այս դեպքում պետական
մեր արդյունաբերությունը և արտաքին առևտուրի մոնոպոլիայի
կարևորությունը, բնական եր, վոր ռազմակցության մոսկո տեսակետ
մշակեր մեր տնտեսության ներքին զինամեկայի, նրա հեռա-
նկարների մասին: Նույն մոսկո տեսակետն ե, վոր իշխում եր
նաև ռազմակցության բոլոր չեկույթների ժամանակ մեր քաղաքա-
կան զարգացման հեռանկարների նկատմամբ: Զուր չե, վոր տա-
կավին 1922 թվին ընկ. Տրոցկին վերհիշում եր իր «պերմանենտ
հեղափոխության» թեորիան: Տեսություն, վորին չեկակետ եր ծա-
ռայում այն համոզումը, թե բանվորի և գյուղացու դաշինքի խզումն
անխուսափելի չե Ռուսաստանի սոցիալիստական հեղափոխության
ընթացքում: Թերագնահատելով հեղափոխության ներքին շարժիչ-
ները՝ «պերմանենտ հեղափոխության» տրոցկիստական թեորիան
փրկության չեկը համարում եր միայն միջազգային պրոլետա-
րիատի հասցնելիք «պետական ոգնությունը»: Այս ոգնությունը
չկար սակայն: Այստեղից հասկանալի չե դառնում 1923 թվի
ռազմակցության ընդհանուր հոռետեսությունը՝ և մասնավորապես՝
նրա ակնարկները կուսակցության հիմնական կադրերի «վերա-
սերման» մասին: Կուսակցական ապպարատը, ասում եր ռազմակց-
ության, «բյուրոկրատանում ե. այդ ե ազդանշում հեղափոխության
«բարոմետրը» — ուսանող չեքիտասարդությունը: Յերիտասարդա-
կան այս տարրերի վրա հենվող «խմբավորումներն» են, վոր կեն-
դանի շունչ փչելով ներկուսակցական դեմոկրատիային, կարող են
դուրս հանել կուսակցության ղեկավարությունը քաղաքական այն

փակուղիից, վոր կարող ե ճակատագրական դառնալ, յեթե կուսակցությունն անգիտանա իր ուղեգծի հիմնական վերադնանատության հարկը:

1923 թվի աշնանը ձևակերպած այս խնդիրները դուզադիպում եյին գյուղատնտեսության և քաղաքային արդյունաբերության մեջ առաջացած «մկրատին»: Միաժամանակ նա արձագանք եր քաղաքական այն ճգնաժամին, վոր զգալի դարձավ Գերմանիայում մեր կրած պարտությունից հետո: Այդ պարտությունը, վոր առաջ եր յեկել մեծ չափով հենց բալկանյան կողմնակիցների արած տակտիկական մի շարք սխալներից, չեր դնում այնուամենայնիվ քաղաքական մեր ընդհանուր ստրատեգիայի վերաքննության խնդիր: Յեկակետ ընդունելով միասնական բանվորական ֆրոնտի լենինյան լոզունգը՝ հեղափոխության միջադպային ուժերը կարողացան հետզհետե ամրանալ նահանջի ճանապարհին գրաված դիրքերում և առանձին վայրերում անել անգամ մասնակի հարձակման փորձեր: Ինչ վերաբերում ե «մկրատին» կուսակցությունը կարողացավ գոցել նրա թևերը և դրանով ամրացնել նորից բանվորի ու գյուղացու դաշինքն առանց քաղաքական վերաբուժության: Արդյունաբերության, ֆինանսների և ներքին առևտրի բնագավառում արմատական մի շարք այն միջոցները, վորոնց ձեռք զարկեց կուսակցությունը 1923—24 թվերին՝ բղխում եյին բացառապես նոր տնտեսական քաղաքականության սկզբունքներից: Գալով, վերջապես, կուսակցական շինարարական խնդիրներին, 1924 թ. Լինինի մահից հետո, կապիտալիզմի մասնակի վերելքի պայմաններում նույնիսկ՝ մենք կարողացանք վոչ միայն զերծ պահել կուսակցության հիմնական կադրերը «վերասերման» պրոցեսներից, այլև ամրացնել սոցիալական նրա վողնաշարը՝ կուսակցության շարքերն առնելով ավելի քան 200 հազար վորակյալ բանվոր:

Բույց և այնպես, բոլոր այս դրական գործերը չվերացրին հիմնովին և չեղին կարող վերացնել միանգամից բոլոր այն տարակուսանքները, վորոնց գլխավոր աղբյուրն եր՝ մեր զարգացման ձեվերի հակասական ընթացքը՝ ՆԵՊ-ի շրջանում: 1924—25 թ. արդյունաբերության և գյուղատնտեսության ընդհանուր մեծ վե-

բելիքն գուզընթաց, ճնշեսուքյան ամբացող սոցիալիստական գիրքերի հանդեպ զարգանում են և ամրանում վորոշ շրջանակների մեջ նաև արտադրության կապիտալիստական հարաբերությունները, նորելուկ բուրժուազիայի և գյուղական կուլակների տնտեսական դիրքերը: Այս գեանի վրա յե, վոր խորանում և գյուղի ներքին դիֆֆերենցիացիան, աճում կապիտալիստական տարրերի ակտիվությունը, ծավալում նրանց մեր դեմ վարած պայքարը և՛ գյուղում, և՛ քաղաքում: Յեվ ահա նորից և դարյալ բարձրանում և հին և անխուսափելի հարցը՝ դեպի ո՞ւր, վճռքան հետևողական և և վճռքան ապահով ընդհանուր մեր ուղին դեպի կոմունիզմ:

Այս հարցերը պետք է առաջանային մանավանդ հիմա, յերբ կուսակցությունը վարում է հեղափոխության շոգեմեքենան առանց փորձված ղեկավարի, առանց ընկ. Լենինի: Յերբ բնականաբար հին հարցը ստանում էր նաև նոր ձևակերպություն՝ վո՞րե՞հան է կարողացում բաղադրականության մեր դեկն առանց Լենինի շարժվել նրա ծրագրով, մնալ լենինիզմի հաստատուների մեջ:

— Կուլակների ակտիվացման, տեխնիքական մեր ընդհանուր հետամնացության, հսկաշխարհային հեղափոխության դանդաղ ընթացքի ու կապիտալիզմի ստորկիլիզացիայի պայմաններում խոսել մի չերկրում սոցիալիզմի հաղթության մասին՝ նշանակում է մատնել ազգային սահմանափակություն, շփոթել սոցիալիզմը ՆԵՊ-ի հետ, իդեալացնել ՆԵՊ-ը: Պետք է ազդանշել ընդհակառակը, վոր պոկվելով տնտեսական հավասարության համար պայքարող բանվոր ու չքավոր մասսայից, կորցնելով հաղթանակի միջազգային հեռանկարները, կուսակցությունը յենթարկված է գաղափարական-քաղաքական «վերասերման» վտանգին: Լենինիզմի փորձված կոմպասը կորցնելու վտանգին չենթակա՝ առանց միջազգային-հեղափոխական կուրսի՝ հեղափոխության նախընտրանում և թևակոխել իր խորտակման շրջանը:

Եյականում նման հայտարարությամբ և, վոր հրապարակ չեկավ կուսակցության 14-րդ համագումարի նախորեյին և այդ

համագումարի ժամանակ նոր ուղադիրցիան՝ Զինովեր, Կամենե-
վի, Կրուպսկայայի և Սոկոլնիկովի ղեկավարութիւնը:

1923 թվի ներկուսակցական դեգերումների շրջանում ուղ-
ադիրցիայի ղեկավարները պայքարել էին Տրոցկու և նրա հե-
տնորդների դեմ: Բայց ծնունդ առնելով նոր տնտեսական քա-
ղաքականութեան շրջանում առաջ չեկող ներքին հակասութիւն-
ներից, ըմպելով տարակուսանքների ընդհանուր աղբյուրից՝ նոր
ուղադիրցիան, պահպանելով բոլոր իր առանձնահատկութիւննե-
րը, հիմնականում ձևավորում է միայն **հին դեգերումների մի
նոր վայանքը**, դրանց զարգացման մի **նոր եռապը**:

Նոր ուղադիրցիան չի հրաժարվում անմիջապես նոր տնտ.
քաղաքականութիւնից, ուղղակի պայքար չի սկսում այդ քաղա-
քականութեան դեմ: Բայց **ՆԵՊ-ը** բացառապես վորպես **նահանջ**
բնորոշելով կապիտալիստական տարերքի առաջ, վեր հանելով մի-
այն նրա բացասական կողմը, նոր ուղադիրցիան տնդիտանում է
փաստորեն նրա անհրաժեշտութիւնը, նրա հարաճուն դրական
արդյունքը մեր **սոցիալիստական շինարարութեան** տեսակետից:
Միակողմանի մերձեցումով ուղադիրցիան չի նկատում մեր զար-
գացման հակասական, դիալեկտիկական բնույթը **ՆԵՊ-ի** շրջա-
նում, թերագնահատում է մեր տնտեսութեան սոցիալիստական
տարրերի տեսակարար կշիռը և, ընդհակառակը, պանիքական մը-
տաչնութիւն ցանում կապիտալիստական տարերքի աճող վը-
տանգի հանդեպ: Բնորոշելով մեր ժողովրդական տնտեսութեան
կառուցվող սիւսեմը, վորպես **պեսական կապիտալիզմի** սիւսեմ,
նոր ուղադիրցիան կասկածի տակ է առնում անգամ մեր **պեսա-
կան արդունաբերութեան սոցիալիստական բնույթը**: Նույնը պե-
տական առևտրի և կոոպերացիայի վերաբերմամբ: Յեթե 1923 թ.
ուղադիրցիան չափազանցեցնում էր մասնավոր առևտրականի վը-
տանգը՝ նույնն առնում է հիմա նոր ուղադիրցիան **կուլակի** աճող
վտանգի նկատմամբ: Յեւ, յեթե հին ուղադիրցիան թերագնահա-
տում էր **գյուղացիութեան ամբողջովին**, նույն թերագնահա-
տութիւնը ներկայիս նկատում ենք նոր ուղադիրցիայի կողմից
միջին գյուղացիութեան հանդեպ: Միջակ գյուղացիութիւնը վոր-
պես յերկրագործութեան «կենտրոնական ֆիգուրա» բացակայում

և գրեթե ոպպողիցիայի առաջադրած տեսությունների և նրա առաջարկած քաղաքական ընդհանուր կոնցեպցիայի մեջ: Այստեղից և հենց, վոր սկիզբ և առնում մեր գործադրած սոցիալիստական շինարարության նոր չեղանակների թյուր ըմբռնումը: Յեվ սրա շնորհիվ և միաժամանակ, վոր նոր ոպպողիցիան չի հայտնաբերում պարզ գիտակցություն այն մասին, քե վո՞րտեղից կարող և սպառնալ մեզ, իրոք, գաղափարական - բաղափական «վերասերման» վսանգը. կամ, ինչպես արտահայտվել են վոմանո՞ «Տերմիդորի» վսանգը պրոլետարական դիկտատուրայի համար: Միջակ գյուղացիության այս թերագնահատումից ել ծայր են առնում ոպպողիցիայի բոլոր վարանումներն ու դեգերումները:

Վճրքան և զորեղ պրոլետարական, սոցիալիստական տարրը մեր տնտեսության մեջ: Վճրքան և կարողանում պրոլետարիատն իր ձեռքն առնելով արտադրության գլխավոր ուժերը, մտցնել նրանց զարգացումը սոցիալիստական հունի մեջ ընդհանուր կապիտալիստական շրջաօտտի պայմաններում, մանր-բուրժուական գյուղացիական մեր չերկրում: Յեվ ամենից առաջ, վորքան հնարավոր և առհասարակ սոցիալիզմի հաղթանակը մի չերկրում:

2.

ՀԻՆ ԴԵԴԵՐՈՒՄՆԵՐԸ ՆՈՐ ՁԵՎԵՐՈՎ

Սոցիալիզմի՝ մի չերկրում տանելիք հաղթության խնդրում նոր ոպպողիցիան ջանք և առնում ամենից առաջ «վերականգնել» Լենինի տեսակետն այդ հարցի մասին: Խոսելով սոցիալիզմի հաղթության մասին մի չերկրում, Լենինը, պնդում և ոպպողիցիան, կամեցել և միայն հիմնավորել այն միտքը, թե պարտադրական և, վոր յուրաքանչյուր չերկրում կոմմունիստներն սկսեն ու զարգացնեն պայքար սոցիալիզմի համար: «Տապալել բուրժուազիայի իշխանությունը և ստեղծել պրոլետարական կառավարություն՝ սա մի բան և. — գրում և ընկ. Ջինովեր: Վորպես սկզբնավորություն՝ այդ կարելի չե գլուխ բերել նաև մի չերկրում: Այլ բան և ապահովել սոցիալիստական հանրակարգի լիակատար և վերջ-

հական հաղթանակը: Վերջինս հնարավոր է միայն մի շարք յերկիրներում պրոլետարիատի տանելիք հաղթության հետևանքով»¹⁾:

Սոցիալիզմի՝ մի չերկրում տանելիք հաղթանակի «լենինյան» այս «լուսարանության» համար բնորոշ է յերկու բան: Ընկ. ~~Ջինովներ~~ ձևակերպում է խնդիրն—այնպես, վոր իբր խոսելով մի չերկրում սոցիալիզմի տանելիք հաղթության մասին՝ Լենինը նկատի չե ունեցել միայն «տապալել բուրժուազիան և ստեղծել պրոլետարական կառավարություն»: Այն, ինչ դուրս է սոցիալիզմի համար ձեռնարկած ու դարգացող պայքարի այդ «սկզբնավորությունից», ընկ. Ջինովներ համարում է արդեն «սոցիալիստական հանրակարգի լիակատար և վերջնական հաղթանակի» խնդիր, վոր պիտի լուծվի «մի շարք յերկիրներում պրոլետարիատի տանելիք հաղթության հետևանքով»:

Լենինիզմի նման «մեկնաբանությունը» մի չերկրում սոցիալիզմի տանելիք «սկզբնական» հաղթությունների շրջանից դուրս է համարում այդ չերկրի արագորակա՞ն հաղթանակներից: Մի չերկրում պրոլետարիատը կարող է տապալել բուրժուազիան, կարող է նվաճել քաղաքական իշխանություն, բայց դա դեռ չի նշանակում ինքյան՝ հեղաշրջել չերկրի արտադրական հարաբերությունները, այդ հեղաշրջումը հնարավոր է միայն «մի շարք յերկիրներում պրոլետարիատի տանելիք հաղթության հետևանքով»: Այստեղից հետևողական է, վոր խոսելով ՆԵՊ-ի մասին, Ջինովներ նկատում է. ՆԵՊ-ը—դա «յուրորինակ պետական կապիտալիզմ և պրոլետարական պետության մեջ՝ սոցիալիզմի աճող—աճող, բայց տակավին բուսած լինելուց շատ հեռու,—տարրերով»²⁾:

«Կենսագործելով ՆԵՊ-ը... մենք նահանջեցինք ռազմական կոմունիզմից վոչ թե դեպի սոցիալիզմ, այլ՝ դեպի յուրորինակ «պետական կապիտալիզմ» պրոլետարական պետության մեջ»³⁾:

1) Г. Зиновьев, „Ленинизм“. Ленинград, 1926 г. № 273.

2) Ն. տ. № 252:

3) Ն. տ. № 206:

Նույն միտքն ընկ. կրուպսկայան ձևակերպում է այսպես. — «Ըստ ելուծյան ՆԵՊ-ը կապիտալիզմ է, վոր հանդուրժում ենք վորոշ պայմաններով, կապիտալիզմ, վորի շղթան իր ձեռքին է պահում պրոլետարական պետությունը»¹⁾: Առանց լրացուցիչ պարզաբանությունների, այսպես ձևակերպված մտքից պետք է չեզրակացնել, վոր ՆԵՊ-ի արդյունքը, նրա նպատակը պետական կապիտալիզմն է: Հետևողական է այստեղից, յերբ ոպպոզիցիան շարունակում է նկատել մեր տնտեսության ընդհանուր կառուցվածքը, վորպես պետական կապիտալիզմ: Հետևողական է, յերբ 14-րդ համագումարի նախորդին ոպպոզիցիայի ղեկավարները պետական-կապիտալիստական ելին հռչակում վոչ միայն մեր հանրակարգը, այլև՝ մեր պետական արդյունաբերությունը: Չէ՞ վոր նրա սոցիալիստական տարրերը «աճում են» միայն, սակայն շատ հեռու յեն «բուսած լինելուց»: Վերջին հարցում, ճիշտ է, ոպպոզիցիայի ղեկավարները դիսկուսիայի ընթացքում զիջեցին մասամբ իրենց դիրքերը՝ հաշտվելով Լենինի այն բանաձևի հետ, վոր բնորոշում է մեր պետական արդյունաբերությունը, վորպես «հաջորդաբար-սոցիալիստական տիպի ձեռնարկություններ»:

Բայց այս զիջումն էս ձևական է: Նոր ոպպոզիցիայի ղեկավարները համառում են փաստորեն հին դիրքերում: Ըստ Կամենևի՝ մեր արդյունաբերական ձեռնարկությունները «հաջորդաբար-սոցիալիստական տիպի. յեն, վորչափ այդ ձեռնարկությունների արտադրական միջոցները պրոլետարական պետության սեփականություն են կազմում: Սակայն մեր պետական արդյունաբերությունը լիակատար «սոցիալիստական» չէ, «մարդկային հարաբերությունները, աշխատանքի կազմակերպությունը, աշխատանքի հատուցման ձևը, շուկայի հետ կապված լինելը, չեն դարձնում այն լիովին սոցիալիստական տնտեսություն»: Ապա ձևակերպելով սկզբունքային իր վերաբերմունքը դեպի մեր պետական-արդյունաբերական ձեռնարկությունները, ընկ. Կամենևիվ չեզրակացնում է. — «Ըստ սեփականատիրական հարաբերու-

¹⁾ XIV с'езд РКП (б.) Бюллетень № 4 էջ 11:

թյունների այդ ձեռնարկները սոցիալիստական են, ըստ մարդկային հարաբերությունների՝ վոչ»¹⁾։

Սակայն նոր ռապոզիցիայի ներկայացուցիչներն անուամբ են նորանոր հայտնագործություններ։ Ոոսելով պետական կապիտալիզմի տեսակների մասին ընկ. Սոկոլնիկովը հայտարարում է. «Մեր արտաքին առևտուրը տարվում է վորպես պետկապիտալիստական ձեռնարկություն... : Մեր ներքին առևտրական ընկերությունները նույնպես պետկապիտալիստական ձեռնարկություններ են։ Յեվ յես պետք է ասեմ, ընկերներ, վոր պետական բանկը ճիշտ նույնպես պետկապիտալիստական ձեռնարկություն է։ Իսկ մեր փողի սխտեմը։ Մեր փողի սխտեմը հիմնված է նրա վրա, վոր խորհրդային տնտեսության մեջ, կառուցվող սոցիալիզմի պայմաններում, մենք ընձեռնում ենք փողի սխտեմ, վորի կշությունը կապիտալիստական երոնոմիկայի սկզբունքն է կազմում»²⁾։ Սա արդեն մի նոր քայլ է, վոր ավելի քան հարցական է դարձնում վոչ միայն մեր տնտեսության «սոցիալիստական տարրի աճումը», այլև նրա գոյությունը։ Սակայն Սոկոլնիկովը վոչ միայն արձանագրում է «փաստերը», այլև ընդհանրացնում նրանց։ Ընկերներից մեկը շատ տեղին հիշեցրեց 14-րդ համագումարին Սոկոլնիկովի տակավին 1922 թ. արած առաջարկությունը. «Պետք է տրեստները զուտ պետական հիմնարկներից արտասահմանի կապիտալի մասնակցությամբ գործող մասնավոր տնտեսական ձեռնարկություններ դարձնել»³⁾։ Տնտեսության այս սլանը դյուրացնելու համար է, ըստ չերկույթին, վոր ընկ. Սոկոլնիկովն առաջարկ է արել ժամանակին վերացնել արտաքին առևտրի մոնոպոլիան։ Առարկելով Ստալինին, 14-րդ համագումարում, նա առաջարկում էր՝ բացել չերկրի դռներն արտասահմանի կապիտալիստների առաջ, դյուրացնելու համար մեր արդյունաբերությունը վերակահավորելու կարիքը։ Այդ առաջարկի իմաստով՝ պետք է հրաժարվել սկզբունքորեն տնտեսական քա-

¹⁾ XIV с'езд РКП (б.) Бюллетень № 5 Москва 1925 г. № 36.

²⁾ XIV с'езд РКП (б.) Бюллетень № 6 № 34.

³⁾ „Экономическая жизнь“, 1925 г. 8 фев., տես XIV с'езд РКП (б.) Бюллетень № 7, № 21:

դաքականության այն ընդհանուր գծից, վոր նպատակ դնելով մեր յերկրի ինքուստ ազգացիան հետամտում ե ստեղծել մեզանում արտադրական միջոցներ արտադրող գործարաններ: Այլ խոսքով, հարցի տակ առնելով մեր տնտեսության սոցիալիստական տարրերը՝ Սովոյնիկովը շոշափում ե փաստորեն մեր յերկրի գաղութացման, նրա դառնսիւզացիայի խնդիրը:

Նման չեզրակացությունները բոլորում են ինքնին ոպպողիցիայի դեպի մեր յերկրի սոցիալիստական շինարարությունը հայտնաբերած թերահավատությունից: Առանձնապես ընդգծված ե այդ թերահավատությունը ոպպողիցիայի այն չելույթներին մեջ, վոր վերաբերում են գյուղացիության խնդրին: Յեւ իրավ, յեթե նոր տնտեսական քաղաքականությունը մեր արդյունաբերության ասպարիզում նահանջ ե պետական կապիտալիզմի առաջ, ապա գյուղում դա կարող ե լինել միայն նահանջ մասնատիրական կապիտալիզմի, վյուղի կապիտալիստական տարրերի, կուլակի առաջ: Սա ինքն ըստ ինքյան նույնպես հետևողական ե ու պարզ: Յեւ հետևողական ու պարզ այդ չեզրակացությունն ընկ. Ջինովին արդեն իսկ ձևակերպել եր կուսակցության 14-րդ կոնֆերանսից հետո իր չելույթներից մեկում, վորտեղ նա կոնֆերանսի վորոշումները բնորոշում ե վորպես «զիջում գյուղի կուլակ մասին»¹⁾: Իսկ ընկ. Կամենեվը բնորոշելով նույն կոնֆերանսից հետո գյուղում տարվող մեր քաղաքականությունը՝ հայտարարում եր 14-րդ համագումարի առաջ. «Նա, ով ասում ե, թե հողային կապալի, վարձակալության, պայմանների դուրացումը զիջում ե միջակին, նա ծածկում ե իրականությունը ե խեղաթյուրում հեռանկարները, վորովհետև փաստապես զիջում մենք ենք արել կուլակին: Յեւ հետո, յեթե դուք միջակ եք համարում նրան, ով բանվորական ուժ ե վարձում, յեթե դա նա յե, ով հող ե վերցնում կապալով, այդ դեպքում, ընկերներ, մեր յերկրի դասակարգային հարաբերությունների մասին գոյություն ունի տարածայնություն»²⁾: Ընկեր Կամենեվը չեք նկատում այստեղ

¹⁾ „Итоги XIV партконференции и с'езда Советов СССР“ 1925 №29:

²⁾ XIV с'езд РКП (б.) Бюллетень № 5 № 34:

վոր ինքը տարակարծիք է վոչ միայն համագումարի մեծամասնության, այլև Կոմմունիստական Խնտերնացիոնալի հետ, վորը յերկրորդ կոնգրեսում ընդհանուր և պարտադիր վորոշում է ընդունել միջակ գյուղացիության մասին: Համապատասխան ռեզոլյուցիայի մեջ, վորը գրի չե առել ընկ. Լենինը, ասված է.—Տրնտեսական իմաստով «միջակ գյուղացի» ասելով պետք է հասկանալ մանր հողատերերին, վորոնք սեփականության կամ վարձակալության կարգով տիրում են թեկուզ նույնպես մանր, սակայն այնպիսի հողամասերի, վոր կապիտալիզմի ժամանակ, վորպես ընդհանուր կանոն վոչ միայն գոյության համեատ միջոց են տալիս ընտանիքին և տնտեսությանը, այլև հնարավորություն, վորոշ ավելցուկ ստանալու, վորպիսին, գեթ լավագույն տարիներում ընդունակ է կապիտալ դառնալու և վորոնք բավականին հաճախ ոտար բանվորական ուժ են վարձում»¹⁾:

Սակայն, քանի վոր նոր ոպպոզիցիայի ներկայացուցիչները 14-րդ կոնֆերանսի գյուղացիությանն արած զիջումները կապում են կուլակի հետ, բնական է, վոր նրանք գերազնահատեյին կուլակի քանակն ու տեսակարար կշիռը գյուղում և ընդհակառակը՝ թերազնահատեյին միջակի քանակն ու տեսակարար կշիռը: Միջակ գյուղացին, վորին մեր ընթացիկ պայմաններում ընկ. Լենինը բնորոշել եր վորպես յերկրագործության «կենտրոնական ֆիգուրա»՝ անհետանում է փաստորեն ոպպոզիցիայի տեսողության դաշտից: Յեվ դրա մասնավոր հետևանքը չե՞ր միթե, վոր ընկ. Կամենեվը մատի փաթաթան եր դարձրել ստատիստիկական այն սըխալը, վորն այս տարվա հացի ամբողջ պաշարի 61 տոկոսը գյուղացիության 14 տոկոսի սեփականություն եր նշում, մինչդեռ փաստորեն ինչպես յերևաց ստուգումներից, միայն հացի 42 տոկոսն եր, վոր գտնվում եր ազգաբնակչության ունևոր տարրերի — 14 տոկոսի տրամադրության տակ, ըստ վորում այդ 14 տոկոսի ²/₃-ը փաստորեն միջակ գյուղացիության վերին խավն է կազմում:

Գյուղական կուլակի, հետևարար նաև նրանից սպառնացող

¹⁾ Бела Кун. „Коминтерн в резолюциях“. Москва 1926 г. № 63:

վտանգի այս գերազնահատուկությունը և միջակի թերազնահատու-
մը, իրոք, վոր «ծածկում և իրականությունը և խեղաթյուրում հե-
ռանկարները»: Զուր չե, վոր 1925 թ. ընկ. Կամենսկիվը շտապել և
հրատարակել Լենինի 1918 թվին գրի առած ձեռագիր կոչը կու-
լակների դեմ, զուր չե նույնպես, վոր քաղաքացիական սուր
պայքարի շրջանում գրված այդ մարտակոչը Զինովևը բերում և
առանց այլևայլի իննիսիդմի մասին գրած իր մենագրության մեջ¹):
Պատահական չե նույնպես, վոր խոսելով միջակ գյուղացիության
մասին՝ Զինովևի այս գրվածքը կանգ և առնում գրեթե բացա-
ռապես նրան «չեղօքացնելու» լոզունգի վրա, անգիտանալով,
վոր Լենինի այդ լոզունգը նույնպես վերաբերում և այն շրջա-
նին, չերբ դաշնակցելով գյուղի պրոլետարական և կիսապրոլե-
տարական տարրերի հետ՝ քաղաքացիական պատերազմ ենք հայ-
տարարում բուրժուազիային, քաղաքական իշխանություն նվա-
ճելու կամ իշխանությունը նվաճելուց հետո՝ բուրժուական դե-
մոկրատիան փշրելու և պրոլետարական դեմոկրատիա հաստա-
տելու համար²):

Քաղաքում և գյուղում մեզ սպառնացող կապիտալիստական
վտանգի ընդհանուր գերազնահատուկությունը կապիտալիզմի ստա-
րիլիզացիայի և համաշխարհային հեղափոխության դանդաղեցման
պայմաններում հոգեբանորեն հոգ և պատրաստում ինքնին Կու-
սակցության «վերասերման» մտավախության մասին: Մեր տըն-
տեսության սոցիալիստական տարրերի թերազնահատուկությունը,
թերահավատ վերաբերմունքը դեպի սոցիալիզմի հաղթության հնա-
րավորությունը մեր չերկրում և առաջին հերթին միջակ գյուղա-
ցու հետ մեր կնքած դաշինքի թերազնահատումը լրացնում են
պակասը, դարձնելով վերասերման հեղափոխությունն արդեն իսկ
«ազդանշելի» չերևույթ: Յեվ այդ չերևույթն և, վոր վեր և հա-
նում ընկ. Զինովևն իր «Եպոխայի փիլիսոփայությունը» — „Фило-

¹) Г. Зиновьев. „Ленинизм“, бж 247 և հետ:

²) Հմմ. Լենինի անավարտ ձեռագիրը «պրոլետարիատի դիկտատուրայի» մա-
սին «Ленинский сборник» Ленинград 1925 г. III, бж 500 և հետ. և Г. Зи-
новьев „Ленинизм“ бж 236 և հետ:

«СОФИЯ ЭПОХИ» վերտառությունն կրող ընդարձակ հոդվածում: 1925
 թվին—գրում ե նա —մեր հեղափոխությունը բացահայտ կերպով
 պատրաստվում է անցնել մի ինչ վոր սահմանագլուխ: Գրեթե
 լավում են ֆիզիքապես պատմության քայլերը: Վերջանում է մի
 գլուխը՝ սկսվում է մյուսը: Անցնելով ապա Խմենովեխովեց Ն.
 Ուստրիալովի «Под знаком революции» ժողովածուի քննու-
 թյան, ուր խոսվում է Սորհրդային իշխանության և կոմկուսի
 «վերասերման» մասին, Զինովեն այդ ժողովածուն մեր «եպոխայի
 փիլիսոփայությունն» համարում, մեր ժամանակի «իրական վտանգ-
 ները» հակառակորդի գրչով ազդանշող մի գործ: Հեղափոխու-
 թյան սուր ճակատամարտերը պահ մի դադար են առել: Սակայն
 հակառակորդը չի ներհում, նա պիտի փորձի և փորձում է արդեն
 ազդելու մեզ վրա «խաղաղ» ճանապարհով անգամ: Հակառակոր-
 դը ջանք սլիտի թափի «մեկնաբանելու» իր «գործիչների», քա-
 ղաքազետների և իդեոլոգների միջոցով կուսակցության 14-րդ
 կոնֆերանսի մշակած ռեզոլյուցիաները ուստրիալովյան վոգով:
 Հնարավոր է միանգամայն, վոր ուստրիալովյան տրամադրու-
 թյունները թափանցեն անգամ կուսակցության ներսը: Բայց կու-
 սակցությունը կդիմանա նաև այդ փորձությանը. «մեր յերկրի
 պրոլետարիատը... կկսեոդանա ռզնուքյան գալ ՌԿԿ-ին մեկ-
 քաքանելու ռեզոլյուցիաները փոխանցման այս շրջանում խիստ
 լենինյան վոգով»:

Վո՞րն է լինելու այդ մեկնաբանությունը: Պատասխանել այդ
 հարցին՝ նշանակում է գծել արդեն նոր ռպպոզիցիայի քաղաքա-
 կան պլանճումը: Պարզ ու սխտեմորեն դու չի ձևակերպված վոչ
 մի տեղ, սակայն հետևելով դիսկուսիայի ընթացքին՝ կարելի չե
 վեր հանել մի քանի հիմնական կետեր. 1. Քանի վոր իր գիծը
 «մեկնաբանելու» համար կուսակցությանն անհրաժեշտ է պրոլե-
 տարիատի «ռզնությունը», ուստի վորպես «ռզնության» նախա-
 պայման՝ նոր ռպպոզիցիան առաջարկում է ուժեղացնել կուսակցու-
 թյան բանվորական կազմը՝ ընդգրկելով «մի տարում» — այլ վա-
 րջանտով՝ մոտակա տարիների ընթացքում — մեր յերկրի արդյու-
 նաբերական բանվորության 90 տոկոսը, կամ, մի այլ տեսակե-
 տով՝ կուսակցության կազմի 90 տոկոսին հասցնել կուսակցական

7/11 1922

բանվորների քանակը: 2. Քանի վոր կուսակցութեան աշխատանքները կազմակերպվում են բավականաչափ չեղանակով չի կարող լինել «վերասերման» վտանգի դեմ՝ գործի հրավիրել նախկին համագումարների ժամանակ դատապարտված ֆրակցիաների ու խմբակցութունների մարդկանց: 3. Քանի վոր կուսակցութունն անմիջական վտանգի տակ է՝ դիմել կոմսոմոլի ոգնութեան: 4. Քանի վոր պետութունը բյուրոկրատանում է, յենթարկվում կապիտալիստական շրջապատի և մանր-բուրժուազիայի ազդեցութեանը՝ «մոտեցնել պետութունը բանվորներին»: 5. Քանի վոր մեր արդյունաբերութունը պետկապիտալիստական է, և «մարդկային հարաբերութունները» տեսակետից համեմատյալ դեպք վոչ սոցիալիստական՝ ուստի արտադրողականութունը բարձրացնելու համար թույլատրել բանվորների մասնակցութունը շահույթի մեջ: Յեվ վերջապես՝ 6. Քանի վոր ՆԵՊ-ը նահանջ է պետական կապիտալիզմի և գյուղի մասնատեր-կապիտալիստի՝ կուլակի առաջ, ուստի «վերասերման» վտանգի հանդեպ անհրաժեշտ է դիմադարձ լինել դեպի պրոլետարիատի միջազգային հաղթանակը, առանց վորի անհնար է սոցիալիզմի հաղթութունը մեր յերկրում, ու միաժամանակ, ընդհանուր հաղթանակի ակնկալութեամբ՝ կազմակերպել մասսաները մեր յերկրում «հավասարութեան» լողունգի ներքո:

«Ինչի համար է՝ վոր Հոկտեմբերի մեծ որերին վտարի յելավ պրոլետարիատը և նրա հետևից՝ ամբողջ ժողովրդի վիթխարի մասսաները»—հարցնում է ընկ. Զինովիևը «Եպոխայի փիլիսոփայութեան» մեջ: «Ինչի՞ համար է, վոր այդ մասսաները կրակ նետվեցին Լենինի հետևից... Հավասարութեան գաղափարի համար, նոր կյանքը հենց վոչ-բուրժուական հիմունքներով կերտելու գաղափարի համար»: «Կամենսկում էք խմանալ—շարունակում է ընկ. Զինովիևը—թե ինչի՞ մասին է յերազում ժողովրդական մասսան մեր որերում: Մի խոսքով արտահայտած լինելու համար այդ յերազը՝ կարելի չե ասել, դա հավասարութուն խոսքն է: Ահա մեր եպոխայի փիլիսոփայութեան իսկական բանալին: Յեվ, յեթե կամենում ենք իսկական արտահայտիչը լինել նրան, ինչ գիտակ-

ցում և ժողովուրդը, պետք է, վոր մենք գլխավորենք հավասարության համար տանելիք պայքարը»¹⁾։

Գլխավորել հավասարության համար տարվելիք պայքարը, նշանակում է՝ գլխավորել այն պայքարը, վոր պիտի տարալիզմի համար։ Ձևակերպել նման մի «լոզունգ»՝ նշանակում է լեկական ունենալ այն համոզումը, վոր կուսակցությունը չի գլխավորում սոցիալիզմի համար տարվող պայքարը։ Կամ այն, վոր կուսակցության տարած պայքարը պայքար չէ տակավին սոցիալիզմի համար։ Այդ նշանակում է առօրյա մեր կառուցողական աշխատանքը, պետական արդյունաբերության բնագավառում թափվող մեր ջանքերը, գյուղական մասսաների կոոպերացման գործը պրոլետարիատի գիկտատուրայի ներքո հակադրել սոցիալիստական հեղափոխությանը, սոցիալիզմին։ Վերադառնալ և ըդիսում նման մտայնությունը։ Դարձյալ նույն այն հայացքից, վոր սոցիալիզմի հաղթանակը մեր յերկրում անհնար է տակավին, վոր պրոլետարիատը կարող եր «սկսել» միայն մեր յերկրում սոցիալիզմի գործը, այսինքն՝ տապալել բուրժուազիան և ստեղծել իր գիկտատուրան, սակայն անկարող է գեոևս կառուցել լիակատար սոցիալիզմ, այսինքն՝ վերակազմել արտադրական հարաբերությունները սոցիալիստական հիմունքով, սոցիալիստական բովանդակություն մուծել մեր արտադրության «մարդկային հարաբերություններին» մեջ։

3.

ՆԱԵՆԻՆԻԶՄԸ ՅԵՎ ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ՀԱՂԹՈՒԹՅՈՒՆԸ ՄԻ ՅԵՐԿՐՈՒՄ

Նոր ուղադրիցիան հրամցնում է բոլոր այս գիտողությունները վորպես «հետևողական լենինիզմի» հայտնություններ։ Մեր քաղաքականությունը յենթակա յե հիմնական իր ճանապարհից խոտորելու վտանգին։ «Ազդանշելով» այդ վտանգը, նոր ուղադ-

¹⁾ «Եպոխայի փլիսոփայությունը» հոդվածի նախնական վարկանտից քաղված բոլոր այս մեջբերումները վերցնում ենք „XIV с'езд РКП (б.) Еюллетень № 4. № 51 և հետ“ չմմ. նաև Դ. Зиновьев, „Философия эпохи“. Ленинград. 1925 г.։

գիցիան հավակնություն ունի «խիստ-լենինյան վոգու» հայա-
նաբերելու մեր «եպոխայի փիլիսոփայությունը» և նշելու նույն
«վոգու» մեր քաղաքականության ուղեգիծը:

Վճիռ չափով են հաջողվել սակայն նոր ոպպոզիցիայի պտըր-
տումները «խիստ—լենինյան վոգու» բնագավառում: Վճիռն և Լե-
նինի պատասխանը «եպոխայի» առաջադրած հիմնական հարցերին:

Սկսենք նոր ոպպոզիցիայի շոշափած գլխավոր հարցից. **հնա-
րավո՞ր և արդյո՞ սոցիալիզմի հաղթանակը մի՞ յերկրում:**

Առարկելով Կ. Կաուցկուն և Տրոցկուն՝ Վ. Ի. Լենինը գեռևս
1915 թվին գրել է.—

«Տնտեսական ու քաղաքական զարգացման անհամաչափու-
թյունը կապիտալիզմի հաստատուն որենքն և: Այստեղից հետե-
վում է, վոր հնարավոր է սոցիալիզմի հաղթանակը նախ սակա-
վաթիվ և նույնիսկ մի, առանձին վերցրած, կապիտալիստական
յերկրում: Այդ յերկրի հաղթական պրոլետարիատը, եֆսպրոպրիա-
ցիայի յենթարկելով կապիտալիստներին ու կազմակերպելով իր
յերկրում սոցիալիստական արագորոքյուն, կարող կլինի վոտքի
յելնել մնացած, կապիտալիստական, աշխարհի դեմ, գրավելով
իր կողմը ուրիշ յերկիրների ճնշված դասակարգերին, ապստամբու-
թյուն բարձրացնելով այնտեղ կապիտալիստների դեմ, հարկը պա-
հանջած գեպքում նույնիսկ ռազմական ուժ գործադրելով հարըս-
տաարիշ դասակարգերի ու նրանց պետությունների դեմ»¹⁾:

Ինչպես տեսնում եք, մի՞ յերկրում պրոլետարիատի տանելիք
հաղթանակն ընկ. Լենինը չեր սահմանափակում միայն բուրժուա-
զիան տապալելու և պրոլետարիատի իշխանություն հաստատելու
«սկզբնական» աշխատանքով, ինչպես անում են այդ նոր ոպպո-
զիցիայի ղեկավարները: Խոսելով մի յերկրում պրոլետարիատի
տանելիք հաղթության մասին, **հնարավոր համարելով այդ հաղ-
թությունը, Լենինը նկատի ունի միաժամանակ նաև «սոցիալիս-
տական արագորոքյուն կազմակերպելու» աշխատանքը:** Ի՞նչ է
նշանակում այս. ի՞նչ է նշանակում կազմակերպել մի յերկրում
սոցիալիստական արտադրություն: Այդ նշանակում է ամենից

¹⁾ Ленин. „Соб. соч.“ XIII 133:

առաջ՝ վերակազմել հին արդյունաբերությունը տեխնիքական նոր հիմքերի վրա, ելեքտրոֆիկացիայի չենթարկել ամբողջ չերկիրը, ինդուստրիական ու կոոպերատիվ հիմքերի վրա դնել ամբողջ տնտեսությունը, կուլտուրականացնել ամբողջ բնակչությունը՝ նրա ձեռքը տալով պետության և տնտեսության ղեկավարությունը: **Հնարավոր** համարելով սոցիալիզմի հաղթանակը մի չերկրում՝ **Լենինը**, նշանակում է, նկատի ունենալ միաժամանակ նաև այս ուղղությամբ մեր տանելիք հաղթությունը:

«Սոցիալիստական արտադրություն կազմակերպելու» աշխատանքը **Լենինի** ուսմունքով կազմում է պրոլետարիատի գիկսասուբայի տնտեսական բովանդակությունը: Պրոլետարիատի գիկսատուրա ասելով **Լենինը** չեր հասկանում միայն բուրժուազիայի տապալումը և պրոլետարիատի քաղաքական իշխանություն հաստատելը, այլև **աշխատանքի կազմակերպության** նոր մի սխեմա, վոր ավելի բարձր է լինելու քան կապիտալիստականը: «Դիկտատուրան միայն բռնություն չէ նշանակում, թեև նա հնարավոր չէ առանց բռնության. նա նշանակում է նաև աշխատանքի կազմակերպություն, ավելի բարձր կազմակերպություն քան նախընթացը... Բռնությունը կարելի չէ գործադրել չունենալով տնտեսական արմատներ, այդ դեպքում պատմությունը նրան խորտակման է դատապարտում: Բայց կարելի չէ գործադրել բռնություն, հենվելով առաջավոր դասակարգի վրա, սոցիալիստական սխեմի կարգի ու կազմակերպության վրա: Յեւ այդ դեպքում նա կարող է ժամանակավոր անհաջողության հանդիպել, բայց անպարտելի չէ»¹): «Հաղթելու համար, սոցիալիզմ ստեղծելու և ամրացնելու համար—գրում է **Լենինը** մի այլ տեղ—պետք է լուծել չերկու տեսակի, չերկճյուղի խնդիր: Առաջինը կապիտալիզմի դեմ ուղղված հեղափոխական կռիւմ անձնվեր հերոսությամբ զբաղվել իր կողմը աշխատավորների, հարստահարվողների ամբողջ մասսան, կազմակերպել նրան, ղեկավարել նրան՝ բուրժուազիան տապալելու և սրա դիմադրությունը ճնշելու համար: Յերկրորդ՝ առաջնորդել աշխատավորներին և հարստահարվողներին ամբողջ մաս-

¹) Ленин. Собр. соч. XVI 222 և հետ.

սան ալլև՝ բոլոր մանր-բուրժուական շերտերը դեպի տնտեսական նոր շինարարության ուղին, հասարակական նոր կապ ստեղծելու, աշխատանքի նոր դիսցիպլինի, նոր կազմակերպության ուղին, կազմակերպության, վոր միացնում է գիտության և կապիտալիստական տեխնիկայի վերջին խոսքը սոցիալիստական խոշոր արտադրություն ստեղծող գիտակից գործավորների մասսայական միության հետ: Այս վերջին խնդիրն ավելի դժվար է քան առաջինը, վորովհետև նա վոչ մի կերպ չի կարող լուծվել առանձին բռնկումով, հերոսականությամբ, այլ պահանջում է մասսայական և առույթ աշխատանքի ամենից տևական, ամենից համառ, ամենից դժվարին հերոսականություն: Բայց այդ խնդիրն էլ ավելի ելական է, քան առաջինը, քանի վոր վերջին հաշվով բուրժուազիայի հանդեպ տանելիք հաղթությունների ամենախոր աղյթուրը և այդ հաղթությունների ամրության և անպարտելության միակ գրավականը կարող է լինել միայն հասարակական արտադրության նոր, ավելի բարձր չեղանակը, կապիտալիստական, մանր բուրժուական արտադրության փոխարինումը խոշոր սոցիալիստական արտադրությամբ¹⁾:

Ի հարկե, լենինը չէր անգիտանում գործի դժվարությունը: Նա չէր մոռանում համաշխարհային մասշտաբով տանելիք հաղթության կարևորությունը սոցիալիզմի մի յերկրում տանելիք հաղթանակը վերջնական դարձնելու համար:

«Յերբ մեզ ներկայացնում են մեր գործի դժվարությունը,—ասում է նա—յերբ մեզ ասում են, վոր սոցիալիզմի հաղթանակը հնարավոր է միայն համաշխարհային մասշտաբով, մենք նկատում ենք այստեղ բուրժուազի ալլև նրա կամա թե ակամա կողմնակիցների առանձնապես անհուսալի մի փորձ՝ խեղաթյուրելու ամենից աներկմտելի մի ճշմարտություն: Ի հարկե, սոցիալիզմի վերջնական հաղթանակը մի յերկրում անհնարին բան է»²⁾: «Սոցիալիզմի հաղթությունը—ասում է ընկ. լենինը մի այլ տեղ—վերջնական կարելի չէ համարել միայն այն ժամանակ, յերբ նա պրո-

¹⁾ Ն. տ. հջ 251:

²⁾ Ленин. Собр. соч. XV, 87.

լետարիատի հաղթություն դառնա առնվազը մի քանի առաջավոր յերկիրներում¹⁾։

Աչքի առաջ ունենալով Ռուսաստանի ընդհանուր հետամնացությունը՝ Լենինն առանձին չեռանդով ե ընդգծում սոցիալիզմի տանելիք հաղթության այս գծվարությունները, — դժվարությունները, բայց վոչ՝ անհնարինությունը։ «Ռուսաստանի 1917 թվի պատմական կոնկրետ, վերին աստիճանի յուրատեսակ պայմաններում հեշտ եր սկսել սոցիալիստական հեղափոխություն, մինչդեռ ռաբուկակել ե իր վախճանին հասցնել այն՝ Ռուսաստանին ավելի դժվար ե լինելու, քան արևմտյան չեվրոպական յերկիրներին²⁾։ Յեվ ընդհակառակը, Արևմտյան Յեվրոպայում ավելի դժվար ե սկսել սոցիալիստական հեղափոխությունը, սակայն ռաբուկակել ե հաղթական վախճանին հասցնել մի անգամ սկսված հեղափոխությունն ավելի դյուրին ե լինելու այնտեղ, քան Ռուսաստանում»³⁾։

Մեր գլխավոր դժվարությունը բղխում ե մեր յերկրի տեխնիքական հետամնացությունից, մեր յերկրի արտադրական ուժերի զարգացման ցածր աստիճանից։ Սակայն նշանակում ե այդ, թե չպետք ե ոգտագործելինք «1917 թ. պատմական, կոնկրետ, վերին աստիճանի յուրատեսակ պայմանները» սոցիալիստական հեղափոխություն սկսելու համար, նշանակում ե այդ, թե մի անգամ սկսած հեղափոխության գործը մեզանում չի կարող հաղթանակել, չեթե վրա չհասնի սոցիալիստական հեղափոխության հաղթությունն առաջավոր յերկիրներում։ Այստեղ դրված հիմնական հարցին Լենինը պատասխանել ե 1918 թվին գրած իր հոգվածներից մեկում. «Անուղղելի սխալ կլիներ հայտարարել, թե մի անգամ խոստովանում ենք մեր տնտեսական ուժերի» անհամապատասխանությունը քաղաքական ուժին, ապա, «ուրեմն» չպետք եր վերցնել իշխանությունը։ Այդպես դատում են «Ֆուտլյարի մարդուկները», վորոնք մոռանում են, վոր «համապատասխանություն» չի լինելու յերբեք, վոր միայն մի շարք փորձերի միջոցով — վորոնցից

1) Ленин Собр. соч. XVI. 403

2) Ленин. Собр. соч. XVII. 153.

3) Հմմ. ն. տ. ե Собр. соч. XV, 233:

յուրաքանչյուրը, առանձին վերցրած, միակողմանի յե լինելու, ունենալու յե վորոշ անհամաչափություններ—պիտի ստեղծվի ամբողջական սոցիալիզմ՝ Բուրժուազիերներին պրոլետարների հեղափոխական գործակցությամբ¹⁾։ Նույն հարցի պատասխանը լենինը ձևակերպել է նաև իր վերջին գրվածքներից մեկում՝ Սուխանովի և Յերկրորդ Ինտերնացիոնալի «պեղանատների» դեմ ուղղած իր սուր դիտողությունների մեջ. «Համաշխարհային բովանդակ պատմության զարգացման որինաչափությունն ընդունելով, բնավ չեն բացասվում, այլ, ընդհակառակը, չենթադրվում են զարգացման առանձին շրջաններ, վոր այդ զարգացման կամ ձևի, կամ կարգի յուրատեսակություն են ներկայացնում... Անհունորեն շարունակ, որինակ, նրանց այն առարկությունը, վոր բերան են արել արևմտյան չեվրոպական սոցիալ-դեմոկրատիայի զարգացման շրջանում և վորի համաձայն՝ մենք դեռ չենք հասունացած սոցիալիզմի համար, մենք չունենք, ինչպես արտահայտվում են նրանց մեջ զանազան «գիտուն» պարոններ, որչեկտիվ տնտեսական նախադրյալներ սոցիալիզմի համար։ Յեվ վոչ մեկը գլխի չի ընկնում հարցնելու իրեն. իսկ չե՞ր կարող արդյոք մի ժողովուրդ, հանդիպելով հեղափոխական այնպիսի մի սխտուացիայի, վորպիսին առաջացավ առաջին իմպերիալիստական պատերազմի ժամանակ, չե՞ր կարող նա արդյոք իր անել դրության ազդեցության ներքո նետվել այնպիսի մի պալքարի մեջ, վոր գեթ վորևե շանա եր սալիս նրան՝ նվաճելու իր համար քաղաքակրթության հետագա աճման վոչ բոլորովին սովորական պայմաններ։ «Ռուսաստանը չի հասել արտադրական ուժերի զարգացման այնպիսի բարձրության, վորի վրա հնարավոր է սոցիալիզմը»։ Այս թեզը Յերկրորդ Ինտերնացիոնալի բոլոր հերոսները, և գրանց թվում, ի հարկե, նաև Սուխանովը դարձրել են, իրոք, մատի փաթաթան։ Այդ անվիճելի թեզը նրանք ծամծմում են հազար բերանով, մինչդեռ ինձ թվում է, դա բնավ վճռական նշանակություն չունի մեր հեղափոխությունը գնահատելու համար»²⁾։ «Սո-

¹⁾ Ն. տ. հջ 273:

²⁾ Ленин, Собр.-соч. XVIII- ч. 2. հջ 118 և հետ:

ցիալիզմ ստեղծելու համար—ասում եք դուք,—պահանջվում ե քաղաքակրթութուն: Շատ լավ: Ապա ինչո՞ւ չեյինք կարող մենք նախապես ստեղծել մեզ մոտ քաղաքակրթվածության այնպիսի նախադրյալներ, ինչպիսին ուստական կալվածատերերի ու կապիտալիստների արտաքսումն է և հետո արդեն սկսել առաջխաղացումը դեպի սոցիալիզմը»¹⁾

Նույն այս մտքին դառնում է Լենինը նաև կոոպերացիայի մասին 1923 թվին գրած իր հոդվածում: «Մեր հակառակորդները —գրում է նա—մեկից ավելի անգամ ելին ասում, թե մենք ձեռնարկում ենք ցնորամիտ մի գործ՝ պատվաստել սոցիալիզմ վոչ բավականաչափ կուլտուրական մի յերկրում: Բայց նրանք սխալվեցին այն բանում, վոր մենք սկսեցինք վոչ այն ծայրից, վորից չենթադրվում եր տեսականորեն (ամեն տեսակ պեղանտների կողմից), և՛ վոր մեզ մոտ քաղաքական ու սոցիալական հեղաշրջումը նախընթաց չեղավ այն կուլտուրական հեղաշրջմանը, այն կուլտուրական հեղափոխությանը, վորի առաջ մենք այնուամենայնիվ կանգնած ենք հիմա:

Մեզ բավական է հիմա կուլտուրական այդ հեղափոխությունը՝ միանգամայն սոցիալիստական յերկիր դառնալու համար. սակայն մեզ համար կուլտուրական այդ հեղափոխությունն անհրեակապելի դժվարություն է ներկայացնում և զուտ կուլտուրական տեսակի (վորովհետև մենք անգրագետ ենք) և նյութական տեսակի՝ (վորովհետև կուլտուրական լինելու համար հարկավոր է արտադրության նյութական միջոցների վորոշ զարգացում, անհրաժեշտ է նյութական վորոշ բազա»²⁾։

Այստեղ հաշվի չեն առնված հիմնական այն պայմանները, վոր անհրաժեշտ են մեր յերկրի սոցիալիստական շինարարության համար: «Կոմմունիզմ՝ դա նշանակում է թորհրդային իշխանություն պլյուս ելեքտրոֆիկացիա—ասել է Լենինը թորհրդյաների 8-րդ համագումարում—միայն այն ժամանակ, յերբ յերկիրը չենթարկված կլինի ելեկտրոֆիկացիայի, յերբ ժամա-

1) Ն. տ. էջ 120:

2) Ն. տ. էջ 145:

նակակից արդյունաբերության տեխնիքական պատվանդանով կը ամրացնենք մեր արդյունաբերությունը, գյուղատնտեսությունը և տրանսպորտը, միայն այն ժամանակ մենք կհաղթենք վերջնականապես... Գրագիտությունից զատ հարկավոր են կուլտուրական, գիտակից, կրթված աշխատավորներ. անհրաժեշտ և, վոր գյուղացիության մեծամասնությունը պատկերացնի իրեն աչն խնդիրները, վոր դրված են նրա առաջ... Պետք և անել այնպես, վոր յուրաքանչյուր ֆաբրիկա, յուրաքանչյուր ելեքտրակայան լուսավորության ոջախ դառնա: Յեւ չեթե Ռուսաստանը ծածկվի ելեքտրակայանների ու տեխնիքական ուժեղ կահավորումների ցանցով, այն ժամանակ մեր կոմունիստական տնտեսական շինարարությունն որինակ կդառնա գալիք սոցիալիստական Յեւրոպայի և Ասիայի համար»¹):

Ընդարձակ այս մեջբերումները, կարծում ենք, պարզում են լիովին Լենինի տեսակետը մի յերկրում և հատկապես մեր յերկրում սոցիալիզմի հնարավոր հաղթության մասին: Տապալելով կալվածատերերին և կապիտալիստներին, հաստատելով իր դիկտատուրան՝ պատմական յուրահատուկ մեր պայմաններում պրոլետարիատը, Լենինի հայացքով կարող և և պետք և անցնի տնտեսության սոցիալիստական վերակազմության: Այդ գործի լիակատար հաղթանակի համար անհրաժեշտ և սակաչն, վոր նա ձեռնարկի ստեղծելու համապատասխան տեխնիքական բազա, նււվաճի համապատասխան «քաղաքակրթություն» մասսաների «կուլտուրական հեղափոխության» միջոցով: Ի հարկե, դժվարին այս աշխատանքը կարող եր շատ դյուրանալ, ստանալ շատ ավելի արագ ընթացք, յեթե մեզ «պետական ոգնության» հասներ արտասահմանյան պրոլետարիատը: Սակայն ընկ. Լենինը մեր հաղթանակի հեռանկարը չեր կապում բացառապես այդպիսի ոգնության հետ: Այլապես ի՞նչ խոսք կարող եր լինել այն մասին, թե «մեր կոմունիստական տնտեսական շինարարությունն որինակ կդառնա գալիք սոցիալիստական Յեւրոպայի և Ասիայի համար»:

Միջադգային սոցիալիստական գալիք այդ հեղափոխության

¹) Ленин, Собр. соч. XVII' 428-30:

հաղթանակն անհրաժեշտ և այնուամենայնիվ վոչ միայն մեր սոցիալիստական հեղափոխության հաղթանակը դուրացնելու կամ նրա տեմպն արագացնելու համար: Սոցիալիզմի միջազգային հաղթանակն անհրաժեշտ և նաև սոցիալիզմի հաղթանակը մեր չերկրում **վերջնականապես** իմպերիալիստական բուրժուազիայի ռազմական միջամտությունից ինչպես նաև հակահեղափոխական ռեստավրացիայից ընդմիշտ ապահովելու համար: Այդ իմաստով միշտ պահում և իր ուժը լենինի այն խոսքը, թե «վերջնականապես հաղթել կարելի չե միայն համաշխարհային մասշտաբով և միայն բոլոր չերկիրների բանվորների միահամուռ ջանքերով»¹⁾ Վորովհետև պարզ և, վոր «անհնարին և խորհրդային և կապիտալիստական սխտեմի տեական համակեցությունը: Վերջ ի վերջո հաղթանակելու չե կամ մեկը՝ կամ մյուսը»²⁾: Իսկ մինչ այդ «մտածել այս կամ այն վտանգի անհետացման մասին՝ կլինեն միանգամայն ծիծաղելի չերևակայություն և ուտոպիզմ»³⁾:

Համաշխարհային հեղափոխության ուժերի աճումը նախապատրաստում և մեր վերջնական հաղթանակի այդ **յերուցխիճե-րը**: Իր կյանքի վերջին տարիներին լենինը հնարավորություն ստացավ դիտելու մասնավորապես հեղափոխական շարժումների աճումն ասիական չերկիրներում: «Պայքարի չելքը—ասում և լենինն իր վերջին հողվածներից մեկում—կախված և վերջին հաշվով նրանից, վոր Ռուսաստանը, Չինաստանը, Հնդկաստանը և այլն կազմում են բնակչության հսկայական մեծամասնությունը: Յեվ հենց բնակչության մեծամասնությունն ևլ վերջին տարիներս անսովոր արագությամբ մտնում և իր ազատագրական պայքարի շրջանը, այնպես վոր այդ իմաստով չի կարող անգամ կասկած լինել այն մասին, թե վորն և լինելու համաշխարհային պայքարի վերջնական վճիռը: Այդ իմաստով սոցիալիզմի վերջնական հաղթանակը լիովին և անպայման ապահովված և»⁴⁾: Բայց սրանով հենց լենինը համաշխարհային հեղափոխության համար

¹⁾ Ленин, Собр. соч. XV, 287.

²⁾ Ленин, Собр. соч. XVI, 102.

³⁾ Ленин, Собр. соч. XVII, 408.

⁴⁾ Ленин, Собр. соч. XVIII, ч. 2, 68 137.

տարվող մեր անմիջական պայքարին վճռական տեղ ե հատկացնում: Մեր անմիջական պայքարն է, վոր պիտի դառնա ընդհանուր հաղթության չերաշխիք: Իսկ մեր հաղթանակի այդ չերաշխիքը նվաճելու համար անհրաժեշտ է, վոր բեռնեք մեր ուշադրությունը յերկրի սոցիալիստական շինարարության վրա: Լենինն անդրադառնում է այստեղ մեր տնտեսության սոցիալիստական վերակազմությունը միջազգային հեղափոխության հիմնական գործոններից մեկը դարձնելու խնդրին: «Ներկայիս մեր գլխավոր ազդեցությունը միջազգային հեղափոխության վրա,—ասում է Լենինը—մենք գործում ենք մեր տնտեսական քաղաքականությամբ...: Այդ ասպարեզն է փոխադրված պայքարը համաշխարհային մասշտաբով: Յեթե կարողանանք լուծել այդ խնդիրը, այն ժամանակ մենք կտանենք խաղը միջազգային մասշտաբով, սոսկապես յեվ վերջնականորեն: Ուստի տնտեսական շինարարության խնդիրները մեզ համար ձեռք են բերում բացառիկ նշանակություն: Այդ ֆրոնտի վրա պիտի հաղթություն տանենք մենք դանդաղ, աստիճանական—արագ չի կարելի—բայց անշեղ վերելքով և առաջխաղացությամբ»¹):

Մեր կացությունը դժվարանում է վոչ միայն շնորհիվ ներքան, վոր համաշխարհային հեղափոխությունը դանդաղ է զարգանում, այլև շնորհիվ նրան, վոր բուրժուազիայի մեր դեմ կազմակերպած տնտեսական բլոկադան իր հերթին է դանդաղեցնում մեր տնտեսության զարգացման տեմպը և այդպիսով վտանգում հեղափոխության ընդհանուր կացությունը: Այսպիսի պայմանում մեր քաղաքականության միակ ուղին է շաղկապել մեր տնտեսության, խոշոր արդյունաբերության զարգացումը գյուղատնտեսության լայն ցանցի հետ և դրանով իսկ աստիճանաբար զարկ տալ մեր տնտեսության ինդուստրիալիզացիային, չերկրի տնտեսության ընդհանուր վերելքին ժամանակակից տեխնիքական բազայի վրա:

Մեր հաղթանակի դանդաղ ընթացքը պայմանավորված է վոչ միայն մեր միջազգային կացությամբ, այլև մեր չերկրի գյուղ-

¹) Ленин, Собр. соч. XVIII ч. 1, № 282:

դացիական նկարագրով: Գյուղատնտեսական տեխնիքական հետամնացության պայմաններում՝ տնտեսության սոցիալիստական տարրերը մեր չերկրում կարող կլինեն զարգանալ այն չափով, վոր չափով մեր արդյունաբերությունը կարող կլինի «գոգվել» գյուղացիական ճնշեցության հեռ, վոր չափով այդ զոդումը կը դառնա նյութական պատվանդան բանվորի յեվ գյուղացու բաղադրական շաղկապի համար: Այդ և պատճառը, վոր խոսելով մեր վերջնական հաղթանակի մասին՝ Լենինն առաջ և քաշում վոչ միայն մեր միջազգային հեղափոխության հեռանկարներն, այլև մեր չերկրի պրոլետարիատի և գյուղացիության լայն մասսաների «համաձայնությունը»: Կուսակցության 10-րդ համագումարում Լենինն ասաց. —

«Սոցիալիստական հեղափոխությունն այնպիսի մի չերկրում վորպիսին Ռուսաստանն և, կարող և վերջնական հաջողություն ունենալ միայն չերկու պայմաններում: Առաջինը՝ չեթե նրան ոգնության հասնի ժառանգիին մի կամ մի քանի առաջավոր չերկիրների սոցիալական հեղափոխությունը... Մյուս պայմանը՝ դա իր դիկտատուրան իրականացնող կամ պետական իշխանությունն իր ձեռքում պ հող պրոլետարիատի և գյուղացի բնակչության մեծամասնության համաձայնությունն և: Մենք գիտենք, վոր միայն գյուղացիության հեռ կնքելիք համաձայնությունն և կարող փրկել Ռուսաստանի սոցիալիստական հեղափոխությունը, բանի դեռ վրա չի հասել հեղափոխությունը մյուս չերկիրներում»¹⁾;

Համաշխարհային սոցիալիստական հեղափոխության դանդաղեցման պայմաններում՝ ընդգծված տողերի ձևակերպած գիտակցությունն ևր հենց, վոր 1921 թվին առաջադրեց կուսակցությանը նոր ճնշեցական բաղադրական անհրաժեշտությունը:

¹⁾ Ленин, Собр. соч. XVIII, ч. 2. бж 137 և հետ:

ԼԵՆԻՆԻԶՄԸ ՅԵՎ ՆԵՊԸ

Ի՞նչ եր նոր տնտեսական քաղաքականությունը նախընթաց ռազմական կոմունիզմի համեմատությամբ. «Պետք է չիշել —ասում է Լենինը—վոր նոր տնտեսական քաղաքականության հիմնական, մնացած բոլորն իրեն յենթարկող խնդիրն է՝ զոդում առաջացնել նոր եկոնոմիկայի, վորն սկսել ենք կառուցել, շատ վատ, շատ անշնորհք, բայց և այնպես սկսել ենք կառուցել, և գյուղացիական եկոնոմիկայի միջև, վորով ապրում են միլիոնավոր գյուղացիներ: Այս զոդումը չի լեղել, և այդ է, վոր պետք է ստեղծենք մենք ամենից առաջ: Ամեն ինչ պետք է յենթարկել այս նկատառումին:

Մենք կառուցում ենք մեր եկոնոմիկան շաղկապվելով գյուղացիության հետ: Մենք պետք է վերակազմենք մեր եկոնոմիկան և այնպես անենք, վորպեսզի զոդում լինի արդյունաբերության և գյուղատնտեսության տապալարիղի մեր սոցիալիստական աշխատանքի և այն աշխատանքի միջև, վորով զբաղված է յուրաքանչյուր գյուղացի...»¹⁾

Վերջն է այն կոնկրետ միջոցը, տնտեսությունն այն ոեալ ողակը, վոր պիտի զոդում առաջացնեն գյուղի և քաղաքի սոցիալիստական տնտեսության և գյուղացիական մասնավոր տնտեսությունների միջև: Լենինն այդ հարցին պատասխանում է. «Առեվ-տուրք—անա այն «ողակը» անցքերի պատմական շղթայի մեջ 1921—1922 թվերի մեր սոցիալիստական շինարարության անցումնային ձևերի մեջ, «վորից պետք է կաշենք բոլոր ուժերով» մենք պրոլետարական պետական իշխանությունը, մենք՝ դեկավարող կոմունիստական կուսակցությունը: Յեթե մենք հիմա բավականաչափ պինդ «կաշենք» այդ ողակից՝ մոտիկ ապագայում կտիրանանք ստուգապես ամբողջ շղթային, իսկ այլապես տիրանալ ամբողջ շղթային մենք չենք կարող, սոցիալիստական

¹⁾ Ն . տ. Եջ 28:

հասարակական-տնտեսական հարաբերությունների հիմք չենք ըստեղծի»¹⁾։ «Առեւտուրը—շարունակում է լենինը—միակ հնարավոր տնտեսական կապն է տասնյակ միլիոններ կազմող հողագործների ու խոշոր արդյունաբերության միջև, չեթե... չեթե այդ հողագործների կողքին չկա փառահեղ խոշոր մեքենական ինդուստրիա եւեքտրական լարերի ցանցով,—ինդուստրիա, վոր կարող եր է իր տեխնիքական ուժով, և իր կազմակերպական «վերնաշենքերով» ու հարակից չերևույթներով մանր հողագործներին ավելի լավ արդյունք մատակարարել, ավելի մեծ քանակով, ավելի արագ և ավելի եժան, քան առաջ»²⁾։

«Սոցիալիզացիայի չենթարկված ֆարրիկան—ասում է լենինը մի այլ տեղ—տալիս է գյուղացուն իր արդյունքները, իսկ գյուղացին դրա փոխարեն հաց և տալիս։ Սա չե սոցիալիստական հասարակության գոյության միակ հնարավոր ձևը, սոցիալիստական շինարարության միակ ձևը մի չերկրում, վորտեղ մանր գյուղացին մեծամասնութուն է կազմում կամ, համենայն դեպս կազմում է շատ աչքի ընկնող փոքրամասնութուն»³⁾։

Քաղաքական մի ամբողջ ուղեգիծ է սա, վոր նպատակ եր դնում իրեն իրագործելու Հոկտեմբերի առաջադրած խնդիրը տնտեսական շինարարության այլ մեթոդներով, քան նախատեսում եր ռազմական կոմունիզմը։ Սա նշանակում եր չե թե հրաժարվել հին խնդիրներից, այլ շարունակել նրանց լուծելու համար սկսված պայքարը՝ «նոր շրջադարձի» միջոցով։ Ռազմական կոմունիզմի շրջանում մենք փորձում ելինք «միանգամից և անմիջորեն իրագործել, կենսագործել, գործնականորեն զլուխ բերել արդյունաբերության ու չերկրագործության նոր կապը»։ Սակայն այդ չհաջողվեց և չեր կարող հաջողվել մեր ընդհանուր տեխնիքական հետամնացության պատճառով։ Չկարենալով իրագործել դրած խնդիրը «գրոհ տվող հարձակման» միջոցով մենք պետք է լուծե ինք հիմա նույն խնդիրը «մի շարք դանդաղ, աստիճանական գլուշավոր պաշարողական գործողությունների միջոցով»⁴⁾։

¹⁾ Ленин. Собр. соч. XVIII. ч. 1. б. 412:

²⁾ Ն. տ. б. 413:

³⁾ Ն. հեղ. XVIII, ч. 1. б. 331:

⁴⁾ Ն. տ. б. 413:

Ի հարկե, այնքան, վորքան մենք դրանով հրաժարվում ե-
յինք ռազմական կոմունիզմի ընթացքում տիրող այն մտայնու-
թյունից, թե հնարավոր ե խորտակել կապիտալիստական տնտե-
սության բաստիոնն ու ստեղծել սոցիալիստական տնտեսություն
անմիջական գրոհի միջոցով՝ այնքան մենք, անկասկած, կատա-
րում եյինք խոր **նահանջ** մեր քաղաքականության մի շարք հին
դիրքերից: Կարևորն այն ե, սակայն, վոր մենք կատարում եյինք
այդ նահանջը՝ «սառնց ձեռքից տալու գլխավորն ու հիմնակա-
նը»¹⁾: Յերբ գյուղացիների հարկային «մասնատրման» սխտե-
մից նոր տնտեսական քաղաքականության առաջին շրջանում
անցանք սլարենհարկի սխտեմին, դա սոցիալիստական շինարա-
րության մեր հիմնական խնդրից խուսափող նահանջ չեր, այլ
նույն խնդրին մերձենալու մի այլ յեղանակ: «Պարենհարկն—ըստ
լենինի—ծայրահեղ կարիքից, փլուզումից ու պատերազմից առաջ
յեկած յուրատեսակ «ռազմական կոմունիզմից» կանոնավոր սո-
ցիալիստական արգյունգափոխանակուքյան անցնելու ձևերից
մեկն ե»²⁾: Նահանջը կուսակցությունը կատարում եր «տնտեսա-
կան սոցիալիստական ֆունդամենտ կառուցելու համար»³⁾: Կու-
սակցության 11-րդ համագումարում Լենինը հայտարարում եր
արդեն, վոր «**նահանջը վերջացած ե արդեն, վոր խնդիրը հիմա
ուժերի վերակազմությունն ե**»⁴⁾: Սակայն նույն այդ համագու-
մարում Լենինը նշում եր նաև **հարձակման հեռանկարները**:
Նահանջը կատարում եյինք—ասված ե Լենինի ձեռքով պրոֆմի-
ությունների մասին գրված համագումարի ռեզոլյուցիայում—
«վորպեսզի ավելի պատրաստված դիմենք նորից հարձակման՝ կա-
պիտալիզմի դեմ»:

Ամբողջ խնդիրն այն ե, վորպեսզի հիմա առաջ շարժվենք
անհստիմատ ավելի լայն, ավելի զորավոր մասսայով, վոչ այլ
կերպ, քան գյուղացիության հետ, ապացուցելով նրան գործով
պրակտիկայով, փորձով, վոր մենք սովորում ենք ե կսովորենք

1) Ленин. Соб. соч. XVIII, ч. 2. бж 37:

2) Ленин. Соб. соч. XVIII, ч. 1, бж 214:

3) Ն. տ. бж 59 Ленин, Соб. соч. XVIII, տ. ч. 2. бж 59:

4) Ն. տ, бж 40:

ողնել նրան ու ճանել նրան ղեպի հառաջ»¹⁾: «Զողովել գյուղացիական մասսայի հետ, շարքային աշխատավոր գյուղացիության հետ ու սկսել առաջ շարժվել, անհավորեն, անվերջորեն ավելի դանդաղ, քան մենք չերազել ենք, բայց դրա փոխարեն, այնպես, վոր իրոք մեզ հետ շարժվի ամբողջ մասսան: Այդ դեպքում ժամանակին կառաջանա այդ շարժման այնպիսի մի արագացում, վորի մասին այսօր չերազել անգամ չենք կարող: Սա չե, իմ կարծիքով, նոր տնտեսական քաղաքականության առաջին հիմնական դասը»²⁾:

Պարզ ե, թե վորքան ե մեղանշում նոր ուղղորդիչիան նոր տնտեսական քաղաքականության այս «առաջին հիմնական դասի դեմ», յերբ նա բնորոշում ե ՆԵՊ-ը բացառապես վորպես նահանջ կամ չերբ նա դրուժյունն այնպես ե ներկայացնում, վոր իբր ՆԵՊ-ը նշանակում ե զիջում գյուղի վերին շերտին՝ կուլակներին: Դա նույնքան անհեթեթ մի միտք ե, վորքան անհեթեթ միտք կլիներ, յեթե ասելին թե ՆԵՊ-ը նշանակում ե զիջում՝ նեպմաններին: «ՆԵՊ-ով մենք զիջեցինք գյուղացուն, վորպես առևտրականի, զիջեցինք մասնավոր առևտուրի սկզբունքին» — ասում ե Լենինը «Կոոպերացիայի մասին» գրած իր հոդվածում»³⁾: Խոսելով այստեղ գյուղացիության մասին Լենինը նկատի ունի բնականաբար, յերկրագործության «կենտրոնական ֆիգուրան» — միջակ գյուղացիությունը: «Մեզ անհրաժեշտ ե — ասում ե Լենինը կուսակցության 10-րդ համագումարին — կառուցել մեր պետական եկոնոմիկան հարմարվելով ՎԻՋԱԿ գյուղացու եկոնոմիկային, վորը յերեք տարվա ընթացքում մենք չկարողացանք վերակառուցել ե դեռ տասը տարվա ընթացքում չենք վերակառուցի»⁴⁾:

«Պարենհարկի մասին» արած իր նշանավոր զեկուցման մեջ կուսակցության զիջումը գյուղացիությանը, մասնավոր առևտուրի սկզբունքին, Լենինը կապում եր այն յերևույթի հետ, վոր

¹⁾ Ն. տ. հջ 71:

²⁾ Ն. տ. հջ 29 և հետ.:

³⁾ Ն. տ. հջ 139:

⁴⁾ Ленин. Собр. соч. XVIII, ч. 2 հջ 146:

«գյուղի գերազանց տարրը» հեղափոխության տարիներին կատարված տակնուվրայումներին հետևանքով դարձել է միջակ գյուղացիությունը: «Մենք այդ գիտենք վիճակագրությունից, իսկ գյուղում ապրող յուրաքանչյուր մեկն այդ գիտե իր գիտողություններից. նվազել են ծայրահեղ բևեռները, և՛ կուլակի կողմը, և՛ չքավորի կողմը, և բնակչության մեծ մասն սկսել է մոտենալ միջակին: Յեթե մեզ անհրաժեշտ է բարձրացնել մեր գյուղացիական անհասկացության արագորոգականությունը, այդ գեպում մենք պետք է հաշվի առնենք, առաջին հերթին միջակին: Կոմունիստական կուսակցությունը հենց դրա համեմատել կառուցեց իր բաղափականությունը»¹⁾:

Լենինի համար կարևորն այն չէր միայն, Վոր բարձրանալ գյուղացիության այս հիմնական մասսայի տնտեսությունը: Նրա համար կարևորն այն էր նաև, Վոր բարձրացող տնտեսությունը մտնի մեր սոցիալիստական զարգացման, մեր տնտեսության սոցիալիստական կուտակման ընդհանուր շրջանի մեջ: ՆԵՊ-ի ընթացքում կուսակցությունը մշակեց գյուղացիության հետ կրնալիք «համաձայնություն» տնտեսական «միջոցների և փոխանցումների» մի ամբողջ սխտեմ: Սակայն այս սխտեմի շրջանակներում մեզ համար արտակարգ նշանակություն էր ձևվեց բերում առաջին հերթին գյուղացիության կոոպերացումը, Վոր կոչված էր դառնալու այն լայն ճանապարհը, Վորով գյուղացիական լայն մասսան պիտի շաղկապվեր մեր ընդհանուր սոցիալիստական շինարարության հետ: Այդ էր պատճառը, Վոր Լենինն այնքան յեռանդով անդրադարձավ իր վերջին հողվածում կոոպերացիայի խնդրին: «ՆԵՊ-ով մենք զիջեցինք գյուղացուն Վորպես առևտրականի, զիջեցինք մասնավոր առևտրի սկզբունքին—գրում է Լենինը և ավելացնում—հենց սրանից էլ բխում է (հակառակ նրան, ինչ կարծում են) կոոպերացիայի հսկայական նշանակությունը»:

Հիրավի,—շարունակում է նա—պետական իշխանություն արտադրության բոլոր խոշոր միջոցների վրա, պետական իշխա-

¹⁾ Ն. տ. հջ 196:

նություն պրոլետարիատի ձեռքում, այդ պրոլետարիատի դաշինք բազմամիլիոն մանր ու մանրագույն գյուղացիների հետ, այդ գյուղացիության վերաբերմամբ պրոլետարիատի ղեկավարության ապահովում և այլն—միթե սա բոլորը չե, ինչ անհրաժեշտ և կոռպերացիայից, միայն հենց կոռպերացիայից... լիակատար սոցիալիստական հասարակություն կառուցելու համար: Սա դեռ սոցիալիստական հասարակության կառուցում չի նշանակում, սակայն դա այն ամենն է, ինչ անհրաժեշտ է ու բավական այդ կառուցման համար»¹):

Կառուցել սոցիալիստական հասարակություն՝ նշանակում է կառուցել այդ հասարակության համար համապատասխան տեխնիքական պատվանդան, կառուցել հասարակության արտադրական հարարերություններ՝ հիմք ունենալով տեխնիքական այդ պատվանդանը: Մեր հեղափոխության առանձնահատուկ պայմաններում, լենինի ուսմունքով, մենք կարող կլինենք հասնել դրան, չեթե ուղիղ ֆադաֆակացություն տանենք գյուղացիության հանդեպ: Այդ պայմաններով հնարավոր է սոցիալիզմի կառուցումը մեր չիրկրում, անգամ չեթե դանդաղի սոցիալիզմի հաղթությունը կապիտալիստական աշխարհում: «Յեթե մենք—գրում է լենինն իր «Լավ և քիչ, բայց լավ» հոդվածում—պահպանենք բանվոր դասակարգի ղեկավարությունը գյուղի վրա, այդ դեպքում մենք հնարավորություն կստանանք մեր պետության մեջ մեծագույն խնայողության միջոցով տնտեսել ամենափոքր մեր միջոցները մեր խոշոր մեքենայական ինդուստրիայի զարգացման համար, ելեքտրոֆիկացիայի, հիդրոտորֆի զարգացման համար, Վոլխովստրոյի կառուցումն ավարտելու համար և այլն: Սրա մեջ և միայն սրա մեջն է լինելու մեր հույսը: Միայն այն ժամանակ կարող կլինենք, պատկերավոր արտահայտվելով՝ փոխադրվել մի ձիուց մյուսը, այսինքն գյուղացիական, գեղջկական, նիհարած ձիուց, գյուղացիական քայքայված յերկրի պետքերին հարմարեցված տնտեսությունների ձիուց փոխադրվել այն ձին, վոր փնտրում է և չի կարող չփնտրել իրեն համար պրոլետարիատը՝

¹) Ленин, Собр. соч. XVIII, ч. 2, № 140:

խոշոր մեքենական ինդուստրիայի, ելեքտրոֆիկացիայի, Վոլխով-ստրոյի ձին»¹⁾։ Հենված ներքին հնարավորությունների վրա, պայքարելով ներքին դժվարությունների դեմ, աչքաթող չանելով մեր ընդհանուր միջազգային հեռանկարները, մենք կարող կլինենք այսպիսով հաղթանակով դուրս գալ սկսված պայքարից։ «Յեւ ընդ սմին կդիմանանք վոչ թե մանր-գյուղացիական յերկրի մակարդակի վրա, վոչ թե ընդհանուր այս սահմանափակության մակարդակի վրա, այլ մակարդակի, վոր բարձրանում է ուղղակի հառաջ ու հառաջ դեպի խոշոր մեքենական ինդուստրիան»²⁾։

Պարզ է դարձյալ, վոր խոսք չի կարող լինել այն մասին, թե ՆԵՊ-ն այլ ինչ չէ, քան միայն **ճահաճ** կապիտալիստական տարերքի առաջ։ «Ի հարկե, — ասում է Լենինը, «Պարենհարկի մասին» 1921 թ. արած իր զեկուցման մեջ, — առևտրի ազատությունը նշանակում է կապիտալիզմի աճում. վոչ մի կերպ չի կարելի ոձիք պրծացնել սրանից և ով կմտածի ոձիք պրծացնել սրանից ձեռ ու վոտ թափահարելով, նա միայն բառերով կմխիթարի իրեն։ Յեթե կա մանր տնտեսություն, յեթե կա ազատ փոխանակություն — առաջ է գալիս կապիտալիզմ։ Սակայն սարսափելի՞ չե մեզ համար այդ կապիտալիզմը, յերբ մեր ձեռքերումն են ֆաբրիկաները, գործարանները, տրանսպորտը և արտասահմանյան առևտուրը։ Յեւ ահա յես ասում եյի առաջ, պիտի կրկնեմ հիմա և կարծում եմ, թե այս անհերքելի չէ, վոր այդ կապիտալիզմը սարսափելի չէ մեզ համար»³⁾։ «**Առեվտուրի ազատությունը կապիտալիզմի ազատություն է ճանաչում, սակայն այս ճանաչում է կապիտալիզմի նոր ձեւ։ Սա նշանակում է, վոր մենք մի հայտնի չափով նորից կապիտալիզմ ենք ստեղծում։ Մենք այդ անում ենք միանգամայն բացահայտ կերպով։ Սա պետական կապիտալիզմն է։ Բայց պետական կապիտալիզմ մի հասարակության մեջ, վորտեղ իշխանությունը կա-**

¹⁾ Ն. տ. հջ 138։

²⁾ Ն. տ.։

³⁾ Ленин, Собр. соч. XVIII ч. 1. 197։

պիտանի և պահպանում, ու պետական կապիտալիզմ պրոլետարական պետության մեջ—սրանք յերկու տարբեր հասկացողություններ են: Կապիտալիստական պետության մեջ պետական կապիտալիզմը նշանակում է, վոր պետութունը ճանաչում է կապիտալիզմը և վերահսկում է նրան հոգուտ բուրժուազիայի և ընդդեմ պրոլետարիատի: Պրոլետարական պետության մեջ նույնը կատարվում է հոգուտ բանվոր դասակարգի, տակավին շատ զորեղ բուրժուազիային դիմադրելու և նրա դեմ կռվելու նպատակով¹): Յերբ այստեղ լենինն ասում է, թե «առևտրի ազատութունը կապիտալիզմ է», կամ «կապիտալիզմի ազատութուն է», այդ նշանակում է, ի հարկե, վոր ներկա պայմաններում մեկից ծագում է մյուսը, բայց դեռ չի նշանակում, թե դրանք միևնույն բաներն են և կամ թե այն, վոր մեկից կարող է միայն մյուսը ծագել: ՆեՊ-ը, ի հարկե, չէ նույնացնում սոցիալիզմի հետ, բայց նա չի նույնանում նաև կապիտալիզմի հետ: Յեթե դա այդպես լիներ, այն ժամանակ լենինի այն խոսքը, թե «ՆեՊ-ի Ռուսաստանից դուրս կգա սոցիալիստական Ռուսաստանը» պետք է մեկնաբանեյինք այն մտքով, վոր իբր կապիտալիզմը կարող է մերվել սոցիալիզմի հետ, դառնալ սոցիալիզմ, ներառել սոցիալիզմի մեջ: Մինչդեռ լենինն ընդգծում էր շարունակ մեր տնտեսական զարգացման ձևերի հակասական բնույթը: Մեր տնտեսական զարգացումը ՆեՊ-ի պայմաններում նրան ներկայանում էր վորպես կապիտալիստական տարբեր յեվ սոցիալիստական պլանի հակամարտ մի պրոցեսս: Մեր տնտեսական փոխանցումը կապիտալիզմից սոցիալիզմ ՆեՊ-ի միջոցով՝ նրան ներկայանում էր, վորպես զարգացման գիալեֆսիկական մի պրոցեսս: Յեվ հենց այդ միտքն էր շեշտում լենինը, յերբ իր հրապարակորեն արտասանած վերջին խոսքի մեջ ասաց՝ «ՆեՊ-ի Ռուսաստանից դուրս կգա սոցիալիստական Ռուսաստանը»²):

Սակայն սրանով մենք մոտենում ենք արդեն նոր ուղղության հարուցած մի այլ խնդրին—պետական կապիտալիզմի խնդրին:

¹) Ն. տ. հջ 332:

²) Ленин, Соб. соч. XVIII, ч. 2, հջ 108:

5. ԼԵՆԻՆԻՉՄԸ ՅԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԻԶՄԸ

Պրոլետարիատի ղեկավարության ներքո պետական կապիտալիզմի՝ վորպես կապիտալիզմի և սոցիալիզմի փոխանցման ձևի մասին Լենինն արտահայտվել է տակավին Հոկտեմբերյան հեղափոխությունից նախորդին: «Պետական-մոնոպոլիստական կապիտալիզմը—գրել է Լենինը «Գալիք կատասարոֆը և թե ինչպես պիտի կռվել նրա դեմ» հոդվածաշարքում—սոցիալիզմի ամենալիակատար նյութական նախապատրաստությունն է, սոցիալիզմի նախագուռը, պատմական սանդուխքի այն աստիճանը, վորպիսին (աստիճանի) և այն աստիճանի միջև, վոր սոցիալիզմ է կոչվում, չկան միջանկյալ աստիճաններ»¹⁾: «Քանի վոր սոցիալիզմն այլ ինչ չէ, քան պետական-կապիտալիստական մոնոպոլիստի հաջորդող մերձավոր քայլը դեպի հառաջ, կամ այլ կերպ՝ սոցիալիզմն այլ բան չէ քան ամբողջ ժողովուրդի ոգտին դարձած և այդչափ կապիտալիստական մոնոպոլիստ լինելուց դադարած պետական-կապիտալիստական մոնոպոլիստ»²⁾

1918 թվին, «ձախ կոմունիստներին» դեմ վարած պայքարի առթիվ, ընկ. Լենինը հաշվի էր առնում մեր ժողովրդական տնտեսությունից ընդհանուր կառուցվածքի մեջ տնտեսական կենցաղի հինգ հիմնական տարրեր՝ 1) նահապետական, այսինքն գերազանցորեն նատուրալ, գյուղացիական տնտեսություն, 2) ապրանքային մանր արտադրություն (վորի մեջ մտնում է գյուղացիների մեծամասնությունը, վոր հաց և վաճառում), 3) մասնավոր-տնտեսական կապիտալիզմ, 4) պետական կապիտալիզմ, 5) սոցիալիզմ»³⁾: Լենինը մատնանշում էր, վոր մեր եկոնոմիկայի մեջ կան և՛ կապիտալիզմի, և՛ սոցիալիզմի տարրեր, վոր տնտեսական մեր ընդհանուր կառուցվածքի մեջ գերիշխում է տակավին ապրանքային մանր-տնտեսությունը, վոր վերջինիս հանդեպ պետական կապիտալիզմը կլիներ մեզ համար գերազանցիկ տնտեսական սխտեմ, վորը «ամենահաստատ ուղիով

¹⁾ Ленин. Собр. соч. XIV ч. 2, б. 209:

²⁾ Ն. տ. б. 208:

³⁾ Ленин. Собр. соч. XV, б. 264:

դուրս կրեբեր մեզ դեպի սոցիալիզմ»¹⁾). 1921 թվին նախագծելով ՆԵՊ-ը, Լենինը կրկին վերագառնում է 1918 թ. զարգացրած իր այս մտքին: ՆԵՊ-ի ընդհանուր սխեմայի մեջ պետական կապիտալիզմը պիտի ողակեր գլուղացիական մանր տնտեսության տարերքը: Հաղթահարելով մասնավոր տնտեսատիրական կապիտալիզմը, պետկապիտալիզմը պրոլետարական պետության վերահսկողությամբ պիտի չենթարկեր յերկրի տնտեսական զարգացումը: «ՆԵՊ-ին անցնելու խնդիրն էլ հենց այն է, ասում է Լենինը վոր անլուր ծանր պայմաններում, քաղաքացիական պատերազմի պայմաններում, յերբ բուրժուազիան մեր վզին վաթաթեց կատաղի կռվի ձևեր, անմիջական սոցիալիստական շինարարության փորձից հետո՝ 1921 թ. գարնանը մեր առաջ կանգնեց պարզ մի դրություն. վոչ թե անմիջական սոցիալիստական շինարարություն, այլ եկոնոմիկայի մի շարք բնագավառներում նահանջ դեպի պետական կապիտալիզմը, վոչ թե գրոհ տվող հարձակում այլ մի ամբողջ շարք նահանջների հետ կապված տեական պաշարման ծանր, դժվարին և անդուր մի խնդիր: Ահա թե ինչ է անհրաժեշտ տնտեսական խնդրի լուծմանը մոտենալու համար այսինքն՝ տնտեսական փոխանցումը դեպի սոցիալիզմի հիմքերն ապահովելու համար»²⁾:

Պետական այս կապիտալիզմի մեջ Լենինը խոշոր ու բնորոշ տեղ էր հասկացնում կոնցեսսիային ու վարձակալության: Դրանք է, վոր 1911 թ. նախագծով պետք է զարկ տային յերկրի արդյունաբերության զարգացմանը: Այդ նկատառումով, այլև այն գործնական տեսակետից, վոր չենթադրվում էր մեծ չափով արտասահմանյան կապիտալ գրավել մեր կոնցեսսիաների բնագավառը՝ Լենինը չէր վարանում մեր տնտեսության ընդհանուր կառուցվածքը բնորոշել «պետական կապիտալիզմի սխեմա» բառերով³⁾: Սակայն Լենինի նախնական այս չենթադրությունն իրագործվեց նվազ չափով: Կոնցեսսիան ու վարձակալությունը վորպես

¹⁾ Ն. տ. էջ 267:

²⁾ Ленин, Собр. соч. XVIII, ч. I, էջ 396:

³⁾ Ն. տ.:

մեր տնտեսության հինգ հիմնական ձևերից մեկի՝ «պետական կապիտալիզմի» ամենից պարզ ու բնորոշ որինականեր՝ չըստացան սպասված նշանակութիւնը: Այս հանգամանքն իջեցնում էր «պետական կապիտալիզմի» տեսակարար կշիռը մեր կառուցվող տնտեսության ընդհանուր սխառեմի մեջ ու վերացնում վերջինս «պետական կապիտալիզմ» տերմինով բնորոշելու գործնական խմաստը:

Ահա թե ինչ է գրում այդ մասին ինքը՝ Լենինը 1923 թվին: Առարկելով այն ընկերներին, վորոնք վերացական-քաղաքական նկատառումներից մեկնելով գտնում ելին, վոր «չի կարելի պետական կապիտալիզմ անվանել այն հանրակարգը (стро́й), վորտեղ արտադրության միջոցները պատկանում են բանվոր դասակարգին և այդ բանվոր դասակարգին պատկանում է նաև պետական իշխանութիւնը», նա գրում է. «բայց նրանք չեյին նկատում, վոր «պետական կապիտալիզմ» անունը չես գործ եմ ածել առաջի՞ց՝ մեր այսորվա դիրքի և այսպես կոչված ձախ կոմունիստների դեմ տարած բանակովում իմ բռնած դիրքի միջև պատմական կապ հաստատելու համար...: Յեկրորդ՝ ինձ համար միշտ կարևոր է չեղել գործնական նպատակը: Իսկ մեր նոր տնտեսական քաղաքականության նպատակը կոնցեսսիաներ ստանալն էր. կոնցեսսիաներն արդեն պետական կապիտալիզմի պարզ տիպը կլինեյին»¹):

1918 թվին, խոսելով «պետական կապիտալիզմի» մասին, Լենինը միացնում էր դրան «սոցիալիզմը»—սա նշանակում էր նախ և առաջ—պետական արդյունաբերութիւնը—և հակադրում այս յերկուսը մանր-բուրժուական տարերքին: Նույնը՝ 1921 թվին: 1923 թվին պետական կապիտալիզմին—ներկա դեպքում սա առաջին հերթին նշանակում էր կոնցեսսիային—վերապահված դերը Լենինը հատկացնում էր՝ կոոպերացիայի: «Յեթե առանձնացնենք կոնցեսսիաները,—գրում է նա—վոր ի դեպ ասած չգարգացան մեզանում քիչ թե շատ նշանակալից չափով—այդ դեպքում կոոպերացիան մեր պայմաններում միանգամայն և կատա-

¹) Ленин Собр. соч XVIII. ч. 2, л. 143:

ընկալեա զուզադիպում ե սոցիալիզմի հետ»¹⁾: Կոոպերացիայի միջոցով դաշինք կնքելով «մանր ու մանրագույն գյուղացիների հետ, ստանձնելով սրանց ղեկավարությունը՝ պրոլետարիատն իր ձեռքն ունենալով քաղաքական իշխանությունը և տնտեսության հրամայող բարձրությունները, ամենից առաջ՝ պետական արդյունաբերությունը կունենա այն ամենն, ինչ անհրաժեշտ ե «լիակատար սոցիալիստական հասարակություն կառուցելու համար»:

✓ «Իսկապես ասած—շարունակում ե նա—մեզ մնում ե անել «միայն» մի բան. մեր բնակչությունն աչքան «քաղաքակիրթ» դարձնել, վորպեսզի նա հասկանա կոոպերացիային գլխովին մասնակցելու բոլոր ոգուտները և գլուխ բերի այդ մասնակցությունը: «Միայն» այդ: Ուրիշ վոչ մի գլխացավանք մեզ հարկավոր չե հիմա՝ սոցիալիզմին փոխանցվելու համար...: Բայց ՆեՊ-ի միջոցով ամբողջ ազգաբնակչությունը գլխովին կոոպերացիային մասնակից անելու համար,—ահա դրա համար պահանջվում ե պատմական մի ամբողջ եպոխա: Մենք կարող ենք անցնել այդ եպոխան լավագույն դեպքում մի յերկու տասնամյակի ընթացքում»²⁾:

Լենինի նշած այդ «եպոխան» ե հենց, վոր աչքաթող ե արել ընկ. Զինովին իր «Եպոխայի փիլիսոփայության» մեջ: Անգիտանալով այդ՝ նա անգիտացել ե միջին գյուղացիությունը և դրա հետ միասին պետական կապիտալիզմի լենինյան ուսմունքի վողջ իմաստը: «Կոոպերացիայի մասին» հոդվածում Լենինը բնորոշում ե կոոպերացիան վորպես այն գլխավոր ուղին, վորն ողակելու յե գյուղացիական մանր տնտեսությունները պետական արդյունաբերության հետ. սա նշանակում ե՝ Լենինը բնորոշում ե կոոպերացիան վորպես դիալեկտիքական փոխանցման գլխավոր միջոց՝ կապիտալիզմից դեպի սոցիալիզմ: Սրանով լենինյան կոնցեպցիայի մեջ կոոպերացիան գրավում ե ինքնին 1918 և 1921 թվերին պետական կապիտալիզմին հատկացրված տեղը. կոոպերացիան ե, վոր այս առումով գալիս ե բնորոշելու

¹⁾ Ն. տ. հջ 144:

²⁾ Ն. տ. հջ 141 և հետ.:

իրենով կապիտալիզմից սոցիալիզմ փոխանցվող մեր ժամանակաշրջանի կառուցվող տնտեսության հավաքական սխեմա: «Հիմա մենք պետք է գիտակցենք ու կենսագործենք, — գրում է Լենինը — վոր այն հանրակարգը (общественный строй), վորին պիտի ոժանդակենք մենք սովորականից ավելի կոոպերատիվ հանրակարգն է (кооперативный строй)¹⁾: «Իսկ քաղաքակիրթ կոոպերատորների հանրակարգը — շարունակում է նա — արտադրական միջոցների հասարակական սեպհականության, պրոլետարիատի՝ ընդդեմ բուրժուազիայի տարած հաղթության պայմաններում — դա սոցիալիզմի հանրակարգն է»²⁾: Կոոպերացման չենթարկելով ամբողջ ազգաբնակչութունը՝ յերկու վտարով կանգնած կլինենք արդեն սոցիալիստական գետնի վրա»³⁾:

«Կոոպերացիայի մասին» հոդվածում, Լենինը, ինչպես տեսնում եք, վոչ միայն չի նույնացնում մեր «եպոխան» պետական կապիտալիզմի հետ, այլ և հակադրում է, վորոշ իմաստով, պետական կապիտալիզմին:

«Մասնավոր կապիտալիզմի ժամանակ — գրում է նա — կոոպերատիվ ձեռնարկությունները տարբերվում են կապիտալիստական ձեռնարկություններից, վորպես կոլլեկտիվ ձեռնարկություններ՝ մասնավոր ձեռնարկություններից: Պեսական կապիտալիզմի ժամանակ կոոպերատիվ ձեռնարկությունները տարբերվում են պետական-կապիտալիստական ձեռնարկներից նախ վորպես մասնավոր ձեռնարկություններ և ապա վորպես կոլլեկտիվ ձեռնարկություններ: Մեր գոյութունը ունեցող հանրակարգում կոոպերատիվ ձեռնարկությունները տարբերվում են մասնավոր կապիտալիստական ձեռնարկություններից, վորպես կոլլեկտիվ ձեռնարկություններ, բայց չեն տարբերվում սոցիալիստական ձեռնարկություններից, յեթե հիմնված են պետութանը, այսինքն բանվոր դասակարգին պատկանող հողի, արտադրական միջոցների վրա»⁴⁾:

¹⁾ Ն. տ. հջ 141:

²⁾ Ն. տ. հջ 142:

³⁾ Ն. տ. հջ 145:

⁴⁾ Ն. տ. հջ 143 և հետ:

Հակադրելով պետական կապիտալիզմին կոոպերացիան՝
 Լենինը նկատի ունի այստեղ իր բնորոշած «կոոպերատիվ հան-
 րակարգը»։ Նա արդեն իսկ «կոոպերատիվ հացահատիկ» և կո-
 չում ներկա մեր հանրակարգը։ Չի՞ վերացնում սա ինքնին նոր
 ոսպորդիցիայի առարկութունները պետական կապիտալիզմի մա-
 սին։ Լենինի պետական կապիտալիզմը չէր ծածկում իրենով ան-
 շուշտ «մեր գոյութուն ունեցող հանրակարգը»։ Սակայն ավելի ևս
 ակնբախ կը դառնա այդ ճշմարտութունը չեթե հաշվի առնենք
 կառուցվող տնտեսության ընդհանուր սխառմը դարգացման
 սոցիալիստական հունի մեջ մտցնող տնտեսության հրամայող
 բարձրությունները։ Մեր խոսքն այստեղ պետական-տնտեսական
 ձեռնարկությունների մասին և, վերոնց ընդհանուր հայտարարը
 ըստ նոր ոսպորդիցիայի, կազմում և դարձյալ նույն պետական
 կապիտալիզմը։

Բայց վճռքան ուղիղ և նոր ոսպորդիցիայի այդ տեսակետը։

Կոոպերացիային վերապահված կարևոր դերը, ինչպես շեշ-
 տում եր Լենինը, պայմանավորված և հիմնականում նրա պրոլե-
 տարական ղեկավարությամբ։ Կոոպերացիան անկարող և դառ-
 նալ սոցիալիստական շինարարության լծակ, չեթե նրան նախա-
 դրյալ հանդիսանա պրոլետարատի զիկսասուրան։ Այս ըմբռն-
 ման մեջ և կոոպերացիայի լենինյան—դիալեկտիկական տեսու-
 թյան առանցքը։ Յեվ սրա մեջ և հենց կոոպերացիայի մասին
 մշակված լենինյան տեսակետի տարբերութունը սոցիալիստ-ու-
 տոպիստների ու հին կոոպերատորների տեսակետներից։ Կոոպե-
 րացիայի դարգացման սոցիալիստական ուղին կարող և ապահո-
 վել միայն պրոլետարական պեռուքյան ֆինանսական ոժանդա-
 կությունը։ «Յուրաքանչյուր հանրակարգ ծագում և միայն վո-
 բոշ դասակարգի ֆինանսական ոժանդակության միջոցով»—գը-
 բում և Լենինը*։ Գյուղական մանր տնտեսությունների ողա-
 կումը կոոպերացիայի միջոցով անհնարին և առանց պետական
 վարկի, առանց դների համապատասխան քաղաքականության
 և այլն։

2) Ն. տ. հջ 141։

Այդ միջոցով ե, վոր կարող ենք կոոպերացիայի ներսում ուժ տալ նրա զարգացման սոցիալիստական տարրերին և հաղթահարել զարգացման կապիտալիստական տենդենցները: Կոոպերացիայի լիակատար սոցիալիստական վերակազմությունն անհնարին ե առանց գյուղատնտեսության մանր, արտադրության մեքենացման, առանց տեխնիքական և կուլտուրական այն հեղափոխության, վոր լենինը հիմնադրածան ե համարում մեր ընդհանուր սոցիալիստական զարգացման համար. և այդ ե պատճառը, վոր նա խոսում ե «Բաղաֆակիրք կոոպերատորների» մասին: Սակայն պարզ ե, վոր բոլոր այս նախադրյալների տնտեսական հիմքը պետության գերիշխող այն դիրքերն են, առանց վորոնց պրոլետարիատի դիկտատուրան կը ճոճվեր բաց տարածության մեջ, վորպես ներքին կայունությունից զուրկ մի սխտեմ: Չե՞ վոր կոոպերատիվ ձեռնարկությունները «չեն տարբերվում սոցիալիստական ձեռնարկություններից, չեթե հիմնված են պետության, այսինքն բանվոր դասակարգին պատկանող հողի, արտադրական միջոցների վրա»: Կոոպերացիայի սոցիալիստական եվոլյուցիան, նրա սոցիալիստական «վերասերումը» կը մնար բարեպաշտ մի բաղձանք, չեթե պրոլետարիատի ձեռքում չըգտնըվեյին «առագործայան բոլոր միջոցները (բացի նրանցից, վոր պրոլետարական պետությունը կամովին, վորոշ պայմանով ու ժամանակով, տալիս ե հարստահարիչներին, վորպես կոնցեսսիա¹⁾): լենինը նկատի ունի այստեղ առաջի հերթին, իհարկե, դարձյալ հողը և ապա՝ մեր պեճական արգյունաբերական ձեռնարկությունների մեջ կենտրոնացող արտադրական միջոցները:

Հենվելով պետական արդյունաբերության վրա՝ պրոլետարիատը պետք ե դարձնի պետական կապիտալիզմը սոցիալիստական շինարարության գործոն: Հենվելով նույնարդյունաբերության վրա՝ պրոլետարիատը պետք ե դարձնի կոոպերացիան հասարակության սոցիալիստական վերակազմության լայն ճանապարհ: Այդ հնարավոր ե առաջին հերթին շնորհիվ նրան, վոր հասարակական-արտադրական բնույթով մեր պետական արդյունաբերական ձեռ-

1) Ն. տ. էջ 144:

նարկությունները ներկայացնում են «հաջորդաբար-սոցիալիստական տիպի ձեռնարկություններ»¹⁾։

Յեւ ապա՝ այդ հնարավոր ե շնորհիվ նրան, վոր արդեն իսկ 1921—23 թ. թ. ընթացքում, նոր տնտեսական քաղաքականության շնորհիվ այնքան եր ապահովվել պետական արդյունաբերության վերելքը և այնքան բարձրացել մեր «հաջորդաբար-սոցիալիստական տիպի ձեռնարկությունները» նշանակությունը, վոր նա ի վիճակի յեր ազդելու մանր-գյուղացիական տնտեսությունների վերակազմության վրա, անգամ՝ առանց պետական-կապիտալիստական ձեռնարկությունների միջնորդության։

Իհնչ ե նշանակում սակայն Լենինի «հաջորդաբար-սոցիալիստական տիպի ձեռնարկություններ» («предприятия последовательно социалистического типа») արտահայտությունը։ Այդ նշանակում ե «ձեռնարկություններ, վորտեղ և՛ արտադրական միջոցներն են պատկանում պետությանը և՛ այն հողը, վորի վրա գտնվում ե ձեռնարկությունը. և՛ ինքը ձեռնարկությունն ամբողջովին»²⁾։ Նշանակում ե սա արդյոք, վոր, ինչպես ընկ. Կամենսկի վրն եր կարծում 14 ըդ համագումարում, այդ ձեռնարկությունները սոցիալիստական են միայն «ըստ սեփականատիրական հարաբերությունների», սակայն սոցիալիստական չեն «ըստ մարդկային հարաբերությունների»։ Կամենսկի այդ կարծիքը նույն այն «միտքն» ե, վոր համագումարից առաջ «ձեռնարկություններ Պ. Զալուցկին. «Սեփականատիրական հարաբերությունների տնտեսական պատվանդանի վրա պիտի դեռ ևս բարձրանա նաև սոցիալական վերնաշենքը՝ մարդկանց այն հարաբերությունը կամ հարաբերություններն արտադրական պրոցեսում, վոր կոչվում ե սոցիալիզմ կամ սոցիալիստական հանրակարգ»³⁾։

Այստեղ ամեն ինչ շիլ ե և շփոթ։ Յեթե ըստ Մարքսի սեփականատիրական հարաբերությունն արտադրական հարաբերության լոկ իրավաբանական մի արտահայտությունն ե կամ տրն-

1) Ն. տ. էջ 143։

2) Ն. տ.

3) П. Залуцкий и Г. Сафалов, „Еще о государственном капитализме и социализме“. Ленинград 1920 г., էջ 5։

տեսական հարաբերությունները մարդկանց հարաբերություններն են արտադրական պրոցեսում՝ այստեղ այդ հասկացողությունները հակադրվում են իրար, վորպես «պատվանդան» և «վերնաշենք»։ Յեթե, ըստ Մարքսի, հասարակական արտադրության պրոցեսում մարդիկ մտնում են իրար հետ վորոշ հարաբերությունների մեջ, վոր կազմում են հասարակության տնտեսական կառուցվածքը և հանդիսանում այն ռեալ պատվանդանը, վորի վրա բախճրանում է իրավաբանական վերնաշենքը, այստեղ, ընդհակառակը, այդ վերնաշենքն է, վոր հանդես է դալիս արտադրական հարաբերությունների, «մարդկանց հարաբերությունների», ներկա դեպքում «սոցիալիզմի պատվանդանի» դերում։ Արթուր իրոք, 100 տոկոսանոց «լենինիզմ» հրամցնելու դիտումով այնքան թափահարել մարքսիստական նման տնդրագլխություն։

Բնորոշելով «հաջորդարար-սոցիալիստական տիպի ձեռնարկություններն» այդ ձեռնարկությունների սեփականագործական հարաբերությունների տեսակետից՝ Լենինը բնականաբար չիր կարող հակադրել դրանց առաջնական հարաբերությունները սեփականատիրական հարաբերություններին։ Ձեռնարկությունների «սոցիալիստական տիպը» վերացնում է ինքնին դասակարգային ռախգործուրյան մոմենտը, վորպիսին այս կամ այն չափով հարատևում է պետական կապիտալիստական ձեռնարկությունների մեջ, վորտեղ արտադրական միջոցները միայն մասամբ են պետական սեփականություն, վորտեղ սլրուխարիատի դիկտատուրայի ներքո «սոցիալիզմը», ինչպես նկատել է Լենինը, կարող է իշխել միայն յերեք քառորդով¹⁾։ Մեր պետական-արդյունաբերական ձեռնարկությունները «մարդկային հարաբերությունների թափառվ—սոցիալիստական են լիակատար չափով։ Սա չի նշանակում, ի հարկե, թե մարդկային-արտադրական հարաբերությունները մեր պետական-արդյունաբերական ձեռնարկների մեջ դարգանալու, կատարելագործվելու կարիք չունեն։ Ոոսքը թափառի մասին է միայն։ Այդ եր պատճառը, վոր ընդգծելով մեր արդյունաբերության սոցիալիստական բնույթը՝ Լենինն ավելաց-

¹⁾ Ленин. Собр. соч. XV. № 236:

նում ե՝ «последовательно» արտահայտությունը, վոր մեզանում սխալարար թարգմանում են «հետևողական» (conséquente) մինչդեռ ներկա դեպքում դա նշանակում է միայն «հաջորդարար» (successif): Ինչպես արտադրական-տեխնիքական իրենց պատվանդանի՝ նույնպես նաև արտադրական-հասարակական հարաբերությունների տեսակետից լենինը պատկերացնում է սոցիալիզմն իր պրոգրեսսի, իր դինամիկայի, իր զարգացման անընդհատ և հարաճուն պրոցեսսի մեջ:

Լենինի՝ վորպես հետևողական մարքսիստի համար, վոչ միայն մեր պետական-արդյունաբերական՝ ալլ և բոլոր մեր մշուտ տնտեսական ձեռնարկությունների և որգանների սոցիալական բովանդակությունը վորոշողը կարող եր լինել միայն նրանց սոցիալական ֆունկցիան, նրանց դերը մեր հասարակա-արտադրական ընդհանուր հարաբերությունների շրջանակներում: Այդ տեսակետից պարզ եր և՛ վորոշ նաև նրա դիրքը դեպի մեր պեսական առեվտուրն ու պեսական բանկը: Լենինը տակավին Հոկտեմբերյան հեղափոխության նախորդին ե գրել, թե ինչ արժեք կստանար պետական բանկն իշխանության ղեկը պրոլետարիատին անցնելուց հետո. «խոշոր բանկերը՝ դա չե այն «պետական ապարատը», վոր հարկավոր ե մեզ սոցիալիզմն իրագործելու համար և վորը մենք պատրաստի վերցնում ենք կապիտալիզմից,— ըստ վորում մեր առաջ գրվում ե այստեղ խնդիր՝ միայն սովել ալն, ինչ կապիտալիստորեն ալլակերպում ե այդ գերազանց ապարատը...: Պետական բանկը՝ դա արդեն սոցիալիստական ապարատի իննը տասներորդն ե: Դա համապետական հաշվետվություն ե, արդյունքների արտադրության և բաշխման համապետական հաշվառք, դա, այսպես ասած՝ սոցիալիստական հասարակության կաթիլի պես բան ե»¹):

Նույն «պետական ապարատի» մի մասը, նրա գործառնությունը չե՞ նաև մեր պեսական առեվտուրը: Ի հարկե, բոլոր այս դեպքերում, յերբ խոսում ենք պետական բանկի կամ պետական առևտրի մասին, գործ ունենք փողի հեռ. ապրանքի հեռ:

1) Ленин. Собр. соч. XIV. ч. 2. № 231:

Սակայն կարևորը, վորոշողն այդ չե, այլ այն, վոր բոլոր այդ ձեռնարկություններն իրենց հասարակական գործառնությամբ դուրս են գալիս կապիտալիստական հարաբերությունների շրջանակից և դառնում սոցիալիստական կուսակամ խողովակներ: Վճռողն այստեղ ապրանքը չե կամ փողը, այլ հասարակական հարաբերությունները: «Պետական կապիտալիզմը փողը չե, — գրել և լենինը — այլ հասարակական հարաբերությունները»¹⁾: Նույն այս միտքը ճշմարիտ և նաև սոցիալիզմի նկատմամբ: Կապիտալիզմից դեպի սոցիալիզմ ընթացող մեր եկոնոմիկայի ներկա շրջանում, ՆԵՊ-ի պայմաններում, լսգատ առևտրի պայմաններում մեր պետական արդյունաբերական ձեռնարկությունների միջև անգամ տեղի ունի ապրանքների փոխանակություն, դրամական հաշվառք և այլն: Տարբերությունն այն է, սակայն, վոր փոխանցման ներկա շրջանում կապիտալիստական ձեվով մեր պետական-տնտեսական ձեռնարկությունների մեջ գործ ունենք արդեն նոր, սոցիալիստական սիպի հասարակական հարաբերությունների հետ: Հին ձևերով այդ ձեռնարկությունների մեջ փաստորեն արդեն կազմակերպվում են հասարակական նոր հարաբերություններ, հարաբերություններ, վորոնց սոցիալիստական բովանդակությունը չեն խաթարում կապիտալիզմից ժառանգած ձևերը: Այդ իսկ դրությունը կանխատեսում եր արդեն Մարքսը կապիտալիզմի արգանդից ծագող կոմունիստական հասարակության համար: Սոսելով այդ հասարակությանը փոխանցող տնտեսական հին ձևերի մասին՝ նա նկատում եր «այստեղ մենք գործ ունենք կոմունիստական հասարակության հետ, վորչ այնպես, ինչպես նա զարգացել է իր սեփական պատվանդանի վրա, այլ ընդհակառակն, այնպես, ինչպես նա դեռ նոր է դուրս գալիս կապիտալիստական հասարակության ծոցից, նշանակում է, բոլոր տեսակետներից — տնտեսական, բարոյական, մտավոր — ծածկված է դեռևս այն հին հասարակության բնածին արատներով, վորի ծոցից դուրս է գալիս»²⁾:

¹⁾ Ленин. Собр. соч. XV. 249:

²⁾ К. Маркс. „Критика Готской программы“. перевод Н. Алексеева. С.-Петербург. 1906, № 14:

Մարքսի այս դիտողութիւնն է, վոր պետք է վերհիշենք մեր պետական տնտեսական ձեռնարկութիւնների մասին նոր ոպպողիցիայի ձևակերպած կարծիքների տեսական և գործնական արժեքը վորոշելու համար:

6.

ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ԸՆԹԱՑԻԿ ՊԱՅՔԱՐԸ ՅԵՎ ԼԵՆԻՆԻԶՄԸ

Նոր տնտեսական քաղաքականութիւն շրջանում մեր տնտեսական զարգացումն հարթում է իր ճանապարհը—հասարակական-տնտեսական հակամարտ տարրերի բաղխման միջոցով: Պարզ է, վոր քանի դեռ զարգացման սոցիալիստական տարրերը չեն հաղթահարել զարգացման կապիտալիստական տարրերին—բաղխումը ներհակ այդ ուժերի միջև բնական է և անխուսափելի: Ավելին՝ տնտեսական ուժերի այդ բաղխման միջոցով է, վոր ապահովվում է մի հայտնի չափով տնտեսութիւն ընդհանուր վերելքը ՆԵՊ-ի շրջանում: Միայն զարգացման մի վորոշ աստիճանի վրա չէ, վոր յերկրի տնտեսութիւն սոցիալիստական ուժերն ընդգրկում են զարգացման կապիտալիստական տարրերը և աստիճանաբար յենթարկումնրանց պլանային տնտեսութիւն ընդ-, հանուր սխտեմին:

Տնտեսութիւն ներհակ ուժերի այս բաղխումը ՆԵՊ-ի շրջանում հետևանք է այդ ուժերը ղեկավարող սոցիալական հակամարտ դասակարգերի շերտավորութիւն: Տնտեսութիւն սոցիալիստական տարրերի հաղթանակը կապիտալիստական տարրերի վրա ձեռք է բերվում դասակարգային կռիւ միջոցով, վորը պրոլետարիատի դիկտատուրայի ներքո չի վերանում անմիջորեն, այ ընդունում է յուրահատուկ ձևեր: Այս շերտավորութիւնը տեղի ունի ամենից առաջ գյուղում: Մինչդեռ ՆԵՊ-ի շրջանում արդյուղարերութիւն աճումը հավաքում է պրոլետարիատի ուժերը նարկ տալիս նրա դասակարգային կոնսոլիդացիային, գյուղում, ընդհակառակը, ազատ ապրանքափոխանակութիւն պայմաններում, գյուղատնտեսութիւն վերելքին զուգընթաց տե-

դի յե ունենում գյուղացիության շերտավորում յերկու հակա-
մարտ բեմեռների՝ կուլակների ու չքավորների շուրջը: Գյուղա-
տնտեսության զարգացման ընթացքն այդ պայմաններում կախ-
ված է նրանից, թե վորչափ ամուր կարող է լինել պրոլետա-
րիատի դաշինքը կուլակի դեմ պայքարող չքավորության հե-
ռ միաժամանակ նրանից, թե վոր չափով կարող կլինին պրոլե-
տարիատը և նրա դաշնակից չքավորությունն այդ պայքարի ըն-
թացքում մեկուսացնել կուլակին՝ իրենց կողմը քաշելով միջակ
գյուղացիությունը: Միջակի խնդիրն ստանում է այստեղ վճռա-
կան նշանակություն, քանի վոր գյուղացիական այդ տարրը
յերբերվում է շարունակ հակամարտ բեմեռների միջև:

Նոր տնտեսական քաղաքականության շրջանում կռիվը
հիմնականում տեղի ունի այսպիսով յերկու դասակարգի՝ պրոլե-
տարիատի ու գյուղացիության միջև: Սոսկելով Կոմինտերնի 3-րդ
կոնգրեսում նոր տնտեսական քաղաքականության սոցիալական
նշանակության մասին՝ Լենինը բնորոշում է ՆԵՊ-ը, վորպես
«պետական իշխանությունն իր ձեռքում պահող պրոլետարիատի
վերաբերմունք դեպի վերջին կապիտալիստական դասակարգը,
կապիտալիզմի ամենախորին հիմքը, մանր սեփականությունը,
մանր արտադրողը»¹⁾: Այստեղ Լենինը նկատի ունի նախ և ա-
ռաջ գյուղի մանր-բուրժուազիան: Նա կրկնում է մեզ արդեն
իսկ ծանոթ միտքը. «Դուք գիտեք, — ասում է նա մի այլ առ-
թիվ — վոր ոուս գյուղն այս ժամանակամիջոցին հավասարվել է:
Պակասել է խոշոր ցանքատերերի և ցանք չունեցողների մասը,
մեծացել է միջին տնտեսությունը: Մեր գյուղն այս ժամանա-
կամիջոցին ավիլի յե մաքուր-բուրժուական դարձել: Սա ինքնու-
րույն դասակարգ է, այն դասակարգը, վոր կալվածատերերի,
կապիտալիստների վոչնչացումից, անհետանալուց հետո, մնում է
միակ դասակարգը, վոր ընդունակ է գիմազրելու պրոլետա-
րիատին»²⁾:

Պարզ է, վոր Լենինը չի սքողում, չեթազցնում պրոլե-
տարիատի և գյուղացիության, պրոլետարիատի և մանր բուրժու-

¹⁾ Ленин, Собр. соч. XVIII, ч. 1, № 326:

²⁾ Ն. տ. № 178:

ազիայի դասակարգային ներհակությունը, այն, վոր, մասնավորապես, միջակ գյուղացին ընդունակ է դիմագրելու պրոլետարիատին: Նա ընդունում է գյուղացիական այդ ուժի չեղմունը դիրքը պայքարի ներկա շրջանում. «Դուք գիտեք—ասում է նա—թե ինչ է այդ ուժն իր քաղաքական տրամադրություն տեսակետից: Դա—«**ՏԱՏԱՆՄԱՆ ՈՒԺՆ Ե՞՞**»¹⁾: Տնտեսական մեր պայքարի շրջանում՝ պրոլետարիատի դիկտատուրայի ներքո այդ ուժը տատանվում է զարգացման սոցիալիստական ու կապիտալիստական հնարավորությունների միջև: Քաղաքականապես նա չեղմունքում է պրոլետարիատի ու գյուղի կապիտալիստական տարրերի միջև մի կողմից, և գյուղի ունևոր ու կուլակ տարրերի միջև մյուս կողմից:

Հասարակական ուժերի այս բաղխումը նոր տնտեսական քաղաքականություն պայմաններում բացորոշ նկատում ենք վոչ միայն ազատ ապրանքափոխության, գների ազատ պայքարի շրջանում, այլ և՛ գյուղի կադմակերպված հասարակայնության շրջանում: Կուլակ տարրերը փորձում են մուտք գործել չեղբենի անանմիջորեն, ավելի հաճախ՝ իրենց ազդեցությունը, գյուղի խորհրդային որգանները: Նրանք փորձ են անում անգամ տարածել իրենց ազդեցությունը կուսակցական բջիջների վրա: Ավելի անմիջական է նրանց վտանգը գյուղական կոոպերատիվների մեջ: Լենինի այն միտքը, թե գյուղացիների կոոպերացումը վճռական քայլ է արել դեպի սոցիալիզմ՝ չի կարելի խաբեք, հասկանալ աչնապես թե ամեն մի անդամագրություն կոոպերացիային սոցիալապես վերասերում է անդամագրվողին, դարձնում նրան անմիջապես «սոցիալիստական կուտակման մեքենայի պտուտակ», անհետացնում գյուղացիության զարգացման կուլակային ձևերը, ջնջում հասարակական շերտավորումն ու դասակարգային պայքարը գյուղի ներսում և այլն: Նման յենթադրություններն ու կարծիքներն ընդհանուր վոչինչ չունեն Լենինի դմի հետ: «Մանր ապրանք արտադրողների կոոպերացիան—գրում եր Լենինը դեռ 1921 թվին—... ծնում է անխուսափորեն մանր բուրժուական

¹⁾ Ն. տ.:

կապիտալիստական հարաբերություններ, նպաստում դրանց զարգացման, առաջ քաշում կապիտալիստիկներին, նրանց և տալիս մեծագույն շահը¹⁾։ Այս իսկ նկատառումով և, վոր «Կոոպերացիայի մասին» գրած հոդվածում Լենինը 1923 թվին նկատում էր, թե մենք արհամարում եյինք կոոպերացիան առաջներում, վորպես չարչիական գործ և վոր նույն այդ կոոպերացիան «վորո՞ւս սեսակեսից իրավունք ունենք արհամարհելու նաև հիմա՝ ՆԵՊ-ի ժամանակ»²⁾։ Մուտք գործելով կոոպերատիվ միությունները, նպաստելով անմիջապես նրանց շրջանառության միջոցների ավելացմանը, գյուղական կուլակ տարրերը ձգտում են այնուամենայնիվ այս կամ այն չափով, այս կամ այն ձևով իրենց ձեռքն առնել կոոպերատիվների դեկը, կապիտալիստական հունի մեջ մտցնել նրանց զարգացումը։ Սրա դեմ և, վոր պիտի պայքարենք, կոոպերացիայի զարգացման նմանորինակ ընթացքն և, վոր առիթ էր տալիս Լենինին գրի առնելու վերը նշած նկատողությունը, թե կոոպերացիան «վորո՞ւ կողմով իրավունք ունենք արհամարհելու նաև հիմա՝ ՆԵՊ-ի ժամանակ»։

Կամ նույն նկատառումով չե՞ր, չերբ դեռ ՆԵՊ-ի սկզբին Լենինը նշում էր քաղաքական այն բարդությունները, վոր վորո՞ւ չափով առաջ կարող է բերել կոոպերացիան, չեթե կուսակցությունն իր ձեռքը չառնի նրա ղեկավարությունը։ «Կոոպերացիան—հիշեցնում էր Լենինը—առաջացնելով (выделяя) ավելի տնտեսարար տարրեր, տնտեսական տեսակետից ավելի բարձր տարրեր, հենց սրանով քաղաքականության մեջ առաջացնում էր մենշևիկներին ու ես-երներին։ Սա քիմիական որենք է, այստեղ վոչինչ անել չես կարող»³⁾։

Սակայն մի բան և գիտակցել այս վտանգը և միանգամայն այլ բան՝ գերազնահատել այն։ Վտանգի գերազնահատումը նույնքան բացասական յերևույթ է, վորքան նաև նրա թերազնահատումը։ Մի դեպքում մենք թերազնահատում ենք ՆԵՊ-ի բացասական կողմերը, մյուս դեպքում անտեսում ենք ՆԵՊ-ի նշանա-

¹⁾ Ն. տ. հջ 218 և հետ.։

²⁾ Ленин, Собр. соч. XVI ч. II, б. 140

³⁾ Ленин, Собр. соч. XVIII. ч. I, б. 142։

կությունը, վորպես սոցիալիզմի փոխանցման ետապ: «Առաջին վտանգը—ձևակերպում է կուսակցության 1925 թ. սեպտեմբերյան պլենումի այդ առթիվ ընդունած ռեզոլյուցիան—ՆԵՊ-ի բացասական կողմերի քերականահասման վսանգը—առաջացնում է գյուղական չքավորության շահերի անգիտացում և կուլակային վտանգի թերագնահատում: Յերկրորդ վտանգը—ՆԵՊ-ի լիակատար անհրաժեշտության անգիտացումը—առաջ է բերում գյուղացիության հիմնական միջակ մասսայի կարևորագույն նշանակության անգիտացում, բանվորների և գյուղացիների դաշինքի խախտում, և հետևաբար, չերկրում տիրող պրոլետարական դիկտատուրայի թուլացում»:

Անդրադառնալով նույն այն խնդրին՝ կուսակցության 14-րդ համագումարն ընդգծեց այն հանգամանքը, վոր պայքարի ներկա շրջանում կուսակցությանն **ավելի դյուրին է հաղթահարելու** այն վտանգը, վոր սպառնում է կուլակի աճումից, քան այն, վոր սպառնում է միջակի թերագնահատումից և ամենից առաջ՝ նրա տնտեսական զարգացման առաջ խոչընդոտներ ստեղծելուց: Այդ իմաստով համագումարի ընդունած վորոշումները բղխում են այն գիտակցությունից, վոր կուլակի վտանգը ներկայիս **անմիջական** չէ մեզ համար, վոր կուլակն այսօր չի կանգնած մեր դեմ պայքարի բաց դաշտում, ինչպես այդ տեղի ունեւր ռազմական կոմունիզմի շրջանում, յերբ կուսակցությունն իր ուշադրությունը պետք է կենտրոնացնէր կուլակի դեմ վարած պայքարի վրա: Ներկայիս մեր պայքարի գլխավոր դժվարությունն այն է հենց, վոր կուլակը կռվում է մեր դեմ **առաջ բաշելով միջակ գյուղացուն**: Բավական է հիշել այստեղ խորհուրդների անցյալ ընտրությունների որինակը Կուբանում, վորտեղ կուլակը տանում էր իր հետևից միջակին, դարձնում սրան պատենշ կամ զենք մեր դեմ: Քաղաքացիական կռիվների ընթացքում գործադրած **ռազմական մեթոդների** փոխարեն կուլակը գործադրում է այսօր **սոցիալական** պայքարի մեթոդներ: Տնտեսական ուժն է, վոր սնում է կուլակի քաղաքական ակտիվությունը. կուլակը հրապարակի վրա յի այսօր վորպես տնտեսական ուժ, և նրա քաղաքական վտանգը կարող է չափվել այսօր **միայն միջակի**

վրա ունեցած իր հասարակական-տնտեսական ազդեցությամբ: Այս և պատճառը, վոր կուլակի և նրա ակտիվացման դեմ մենք նպատակ պետք և դնենք գործադրել պաշարի այնպիսի միջոցներ, վոր կարող են չեղոքացնել կուլակի ազդեցությունը միջակ գյուղացության վրա—ամենից առաջ՝ կուլակի տնտեսական լի-լուլթը գնումների և վարկավորման դեպքում—և ընդհակառակը՝ ամրացնել միջակ գյուղացիության կապը գյուղի չքավորության և քաղաքային պրոլետարիատի հետ: Իսկ այստեղից հետևում և, վոր ունենալով մեր ձեռքում տնտեսության հրամայող բարձրու-թյունները, ամրացնելով մեր ձեռքում այդ բարձրությունները, մենք պետք և զարկ տանք միջակ գյուղացու տնտեսական զար-գացմանը՝ մեր ձեռքում գտնված պետական տնտեսական միջոց-ներով, մտցնենք այդ զարգացումը սոցիալիստական հունի մեջ և դրանով՝ մեկուսացնենք կուլակի տնտեսական հասարակական ուժը, նրա ազդեցությունը գյուղի միջակ շերտերի վրա:

Նոր ոպպոզիցիայի արտահայտած թեքման վտանգն այն և հենց. վոր կենտրոնացնելով կուսակցության ուշադրությունը կուլակի **անմիջական** վտանգի վրա, սպառնում և աղճատման վտանգի յենթարկել կուսակցության ընթացիկ մեր քաղա-քականությունը: Գերագնահատելով կուլակի անմիջական վը-տանգը՝ մենք հարկադրված պիտի լինելինք՝ կամ վարել նրա հանդեպ **գիջումների** քաղաքականություն, կամ, ընդհակառակը, գործադրել նրա դեմ **առհասնեսական հարկազրահմի, ազմի-նիստրաթիվ ճնշման**, «**ապակուլակայնացման**» քաղաքականու-թյուն: Քաղաքական մի կամ մյուս ուղեգիծը հավասարազոր կը լիներ—իր հերթին՝ նոր տնտեսական քաղաքականության վե-րացմանը կամ նրա լենինյան իմաստի վերաքննությանը:

Տնտեսական նոր քաղաքականության հետ կապված հասա-րակական պրոցեսները, վոր տեղի ունեն խորհրդային գյուղում, լենինը նկատել եր արդեն 1922 թվականին. «Նկատի առնելով գյուղատնտեսության բարձրացման գերազանց կարևորությունը և նրա պրոդուկտների աճումը—գրում և իլլիչը—ներկա մոմեն-տին պրոլետարիատի քաղաքականությունը կուլակ և ունևոր գյուղացիության վերաբերմամբ նպատակ պիտի ունենա գլխա-

վորապես՝ սահմանափակել նրա հարստահարչական ձգտումները»:
«Ի՞նչպես սահմանափակել այդ ձգտումները, ի՞նչպես պետք է և
կարող ե պաշտպանել մեր պետութիւնը չքավորներին—այս է
հարցի ամբողջ էությունը»:¹⁾

Ինչպես տեսնում եք, ինչինը չեր կասկածում, վոր գյուղատնտեսութեան աճող ապրանքայնացումը հրահրելու չե կուլակ և ունևոր գյուղացիութեան «հարստահարչական ձգտումները», նա չեր կասկածում, վոր այդ պայմաններում խորհրդային պետութեան առաջ պիտի դրվի գյուղի վերին շերտերի դեմ չֆավորներին պաշտպանելու խնդիրը: Նա չեր կարող կասկածել այդ, քանի վոր գյուղական չքավորն է և շարունակում է մնալ մեր անմիջական հեցակեցք գյուղում: Սակայն նրա համար «հարցի ամբողջ էությունն» այն եր, թե ի՞նչպիսի ուղեգիծ պիտի ընդունի կուսակցութիւնն արծարծվող դասակարգային պայքարի այս շրջանում, ի՞նչպես պիտի «սահմանափակի կուլակներին առանց դադարեցնելու արտադրական ուժերի աճումը»²⁾: Վո՞րն է այն միջոցը, վոր ներկա դեպքում կարող ե պաշտպանել գյուղի չքավորութիւնը կուլակներից և առհասարակ՝ ինչպես պիտի պաշտպանել գյուղի ու քաղաքի աշխատավոր մասսաները կապիտալիստական տարրերի ժանիքներից: Այս է խնդիրը: Կարո՞ղ ենք կամ պէտք է վերադառնալ դասակարգային կռիւ այն մեթոդներին, վոր գործադրում էինք ռազմական կոմունիզմի ժամանակ: Թույլատրելի՞ չե այսօր չքավորական կոմիտեների վարած քաղաքականութիւնը: Պէտք է, վոր արծարծենք, հրահրենք այսօր դասակարգային մեր պայքարը գյուղական կուլակների դեմ: Հարկավոր է դնել այդ հարցերը՝ շրանց բացասելու համար: Քանի վոր բոլոր այս միջոցներով անհնարին ե սահմանափակել կուլակների հարստահարչական ձգտումները և միաժամանակ չդադարեցնել լոյ միայն կուլակի, այլև հաճախ՝ միջակ գյուղացու արտադրական ուժի աճումը: Իսկ սա նշանակում է՝ չենք կարող գործադրել նման միջոցներ ու միաժամանակ չդնել վերացման

¹⁾ „Большевик“, 1925 г. № 9/10, էջ 140:

²⁾ Ն. տ. էջ 146:

սպառնալիքի տակ տնտեսական այն քաղաքականութիւնը, վոր վարում ենք «արտադրական ուժերի աճումն» ապահովելու համար:

Յեւ այստեղ ե հենց, վոր չենք կարող չհիշել միաժամանակ ընկ. Զինովևի հրապարակ նետած «հավասարութիւն» լողունգը: Կարո՞ղ ե արդյոք ուղեցուցց լինել մեզ պայքարի ներկա շրջանում «հավասարութիւն» լողունգը: Կա՞ արդյոք վորևէ աղերս այդ լողունգի ե այն «ինչպէս»-ի հետ, վոր առաջադրուք ե վերը բերած իր նկատողութիւններին մեջ ընկ. Լենինը:

Անհրաժեշտ ե պատասխանել նախ այն հարցին, թե վորքան ճիշտ են ընկ Զինովևի՝ այդ լողունգի հետ կապված պատմական հիշատակութիւնները: Առարկութիւնը պետք ե սկսել հենց այդ կետից: Ռուս մուժիկը կովել ե Հոկտեմբերին չե թե «հավասարութեան», այլ **հողի** համար: Հակառակ կարծիքը նարոդնիկական պատրանք կը լիներ: Մինչդեռ խնդրի լենինյան ըմբռնումը թելադրում ե մեզ այսոր ես լինել այն համոզման, թե «մեր հեղափոխութիւնը մինչև չքավորների կոմիտեներ կազմակերպելը, այսինքն մինչև 1918 թվի ամառը ե նույնիսկ աշունը՝ նշանավոր չափով բուրժուական եր... Գյուղացիութիւնն իր ամբողջութեամբ գնում եր մեր հետևից, վորովհետե նա գնում եր կալվածատերերի դեմ, տեսնում եր, վոր այստեղ մենք կը գնանք մինչև վերջը»¹): Հետագայում գյուղացիութիւնն որչեկտիվորեն թեկնդիւնց սոցիալիստական հեղափոխութեան շրջանը: Բայց կարո՞ղ ենք պնդել, թե այդ շրջանում իսկ գյուղացիութիւնը, «ժողովուրդը», յերազում եր հավասարութեան մասին: Կամ կարո՞ղ ենք պնդել, թե գյուղացիութիւնը յերազում ե «հավասարութեան» մասին գեթ այսոր: «Հավասարութիւն» ասելով չքավորները մտածում են «ապակուլակայնացման» մասին, իսկ կուլակներն՝ իրավունքի տեսակետից չքավորների հետ «հավասարվելու» մասին: Կարո՞ղ ենք այսոր յուրացնել «հավասարութեան» լողունգի մի կամ մյուս ըմբռնումը: Կարո՞ղ ենք մենք այսոր գյուղ գնալ անմիջորեն «կոմունիստական» լողունգներով: Գրելով այն մա-

¹) Ленин, Собр. соч. XVI, № 105:

սին, վոր պետք է քաղաքի բանվորը կոմունիստական գաղափարների հաղորդիչ հանդիսանա գյուղական պրոլետարիատի միջավայրում, Լենինը հարկ համարեց իր վերջին հոգվածներից մեկում ավելացնել. «Յես ասացի՝ «կոմունիստական», և շտապում եմ նախազգուշացնել, վախենալով թյուրիմացություն առաջացնել կամ չափազանց ուղղաբար հասկացվել. վոչ մի կերպ չի կարելի հասկանալ դա այնպես, վոր իբր մենք պետք է զուտ ու նեղ կոմունիստական գաղափարներ տանենք գյուղը: Մինչ այն ժամանակ, յերբ չկան մեզ մոտ գյուղում կոմունիզմի նյութական հիմքեր, մինչ այդ ժամանակ, դա կը լիներ, կարելի չե ասել, փաստակար, դա կը լիներ, կարելի չե ասել, կործանում կոմունիզմի համար»¹):

Մասնայական գյուղացին մասնավոր սեպհականատեր է, մասնավոր տնտեսատեր: Շատ բան է փոխվել այսոր գյուղացու այն նկարագրից, վոր գծագրել է Լենինը 1907 թվին. «Գյուղացու մեջ ապրում է տնտեսատիրոջ բնազդը, յեթե վոչ այսորվա, գեթ վաղվա տնտեսատիրոջ: Այդ տնտեսատիրական, մասնատիրական բնազդը վանում է գյուղացուն պրոլետարիատից, ծնում է գյուղացու մեջ պատրանք ու ձգտում՝ մարդ դառնալ, բուրժուա դառնալ, մեկուսանալ ամբողջ հասարակությունից իր հոգաբաժնի վրա, իր, ինչպես չարաբար ասել է Մարքսը՝ թրքակուլյտի վրա»²):

«Գյուղացիները սոցիալիստներ չեն — ասաց Լենինը 1920 թվին՝ խորհուրդների 8-րդ համագումարում: Կառուցել մեր սոցիալիստական պլաններն այնպես, վոր ասես թե գյուղացին սոցիալիստ լինի, — նշանակում է կառուցել ավազի վրա, նշանակում է չը հասկանալ մեր խնդիրները, նշանակում է չերեք տարվա ընթացքում սովորած չը լինել համաչափ դարձնել մեր ծրագիրները և համապատասխանություն ստեղծել մեր ձեռնարկությունների և այն աղքատ, հաճախ, վողորմելի իրականության միջև, վորի մեջ գտնվում ենք»³):

Վերն է գյուղում տանելիք մեր այսորվա աշխատանքի նը-

¹) Ленин, Соб. соч. XVIII, ч. II, бж 116:

²) Ленин, Соб. соч. VIII, бж 398:

³) Ленин, Соб. соч. XVII, бж 417:

պատահել: «Մեր նպատակն է—ասել եւ 11-րդ համագումարին ին-
նինը—վերականգնել զոգուամբ, գործերով ապացուցել գլուղացուն,
վոր մենք սկսում ենք նրանից, ինչ հասկանալի չէ նրան, ծա-
նոթ եւ նրան և մատչելի՝ չնայած իր աղքատ վիճակին և վոչ թե
սկսել գլուղացու համար ինչ վոր հեռավոր, ֆանտաստիկ բանե-
րից,—ապացուցել, վոր մենք կարողանում ենք ոգնել նրան, վոր
կոմունիստները քայքայված, աղքատացած, սոսկալի սովահար
մանր գլուղացու ծանր վիճակում՝ նրան հիմա գործով ոգնում
են: Կամ այդ մենք կապացուցենք, կամ նա մեզ դուրս կը վռնդի:
Դա անխուսափելի չէ»¹⁾: Պարզ եւ, վոր, չեթե մենք այնուամե-
նայնիվ համոզված ենք, վոր առաջնորդում ենք այսորվա մեր
գլուղը դեպի կոմունիզմ, այդ համոզումը գլուղացիության կո-
մունիստական մտայնության հաշվառքից չէ բղխում, այլ նրա-
նից, վոր ուղիղ քաղաքական գիծ բռնելով գլուղացիության
հանդեպ՝ մենք ստեղծում ենք գլուղում այնպիսի **ոբյեկտիվ** պայ-
մաններ, վոր հնարավորություն են տալիս մեզ մտցնել գլուղա-
կան մասսան զարգացման կոմունիստական հունի մեջ, անկախ
գլուղացու մասնատիրական ձգտումներից, անկախ «հավասարու-
թյան» մասին իր ունեցած յուրորինակ հասկացողություններից:

«Հավասարություն» ասելով հասկացվում է շատ անգամ
բանվորության և գլուղացիության «հավասարեցում»: Կարո՞ղ եւ
այսոր խոսք լինել նաեւ այդ «հավասարության» մասին: Լենինը
պարզ պատասխան ունի նաեւ այդ հարցին: «Պարզ եւ մի բան,—
ասում է Լենինը,—վոր քանի դեռ կա դասակարգային տարբե-
րություն բանվորի ու գլուղացու միջև, չենք կարող խոսել հա-
վասարության մասին, չնախազգուշացնելով, վոր չլինի թե ջուր
դառնանք բուրժուազիայի ջրաղացին»²⁾: «Բանվորի և գլուղացու
միջև կապիտալիզմից սոցիալիզմ անցնելու ժամանակամիջոցին
հավասարություն լինել անկարող եւ և նրանց, ովքեր խոստա-
նում են այդ, պետք է համարել մարդիկ, վորոնք զարգացնում
են կոլչակի ծրագիրը, թեկուզ և չհասկանան այդ»³⁾:

¹⁾ Ленин, Собр. соч. XVIII, ч. II, № 28 և հետ:

²⁾ Ленин, Собр. соч. XVI, 209:

³⁾ Ն. տ. № 212:

«Քաղաքը չի կարող հավասար լինել գյուղին: Գյուղը չի կարող հավասար լինել քաղաքին այս եպոխայի պատմական պայմաններում: Քաղաքն անխուսափորեն ճանում է իր հեռավոր գյուղը: Գյուղն անխուսափորեն գնում է քաղաքի հեռավոր: Հարցը միայն այն է, «քաղաքի դասակարգերից» վո՞ր գասակարգը կարող է տանել իր հետևից գյուղը, հաղթահարել այս խնդիրը և ի՞նչ ձևեր է ընդունելու քաղաքի այդ ղեկավարութունը»¹⁾:

Վերջապես՝ «հավասարության» տակ հասկանում են հաճախ աշխատավարձի հավասարեցում տարրեր կատեգորիայի աշխատավորների միջև: Կարո՞ղ ենք գործադրել մենք այսօր «հավասարութուն» լոգունգն այդ իմաստով: Այդ տեղին կը լիներ, չեթե ներկա պայմաններում վերացնել կարողանայինք աշխատանքի վորակի տարբերութունը: Այդ հնարավոր կը դառնա տեխնիքայի, աշխատանքի արտադրողականության զարգացման ավելի բարձր աստիճանի վրա՝ կոմունիստական հասարակության մեջ: Իսկ մինչ այդ պահպանում է իր ուժը Լենինի հին պատգամը՝ «За науку заплатить не жалко, лишь бы учение шло толком»: Մինչ այդ՝ «հավասարութուն» ասածը միայն «աշխատանքի չափանշի» հավասարութուն կարող է լինել: Սակայն դրանով մենք շոշափում ենք միայն գործող իրավունքի խնդիրներից մեկը: Հատուկ լոգունգի կարիք այստեղ չի զգացվում բոլորովին: Այդպիսի կարիք կարող են զգալ միայն նրանք, ովքեր կարծում են, վոր կոմունիստական հավասարութունն արդեն իսկ հիմա կարող է որվա լոգունգ դառնալ մեզ համար, կամ, ավելի շուտ, նրանք, ովքեր նման լոգունգով կամենում են հակադրել այսօրվա մեր աշխատանքը կառուցվող սոցիալիզմին: Բայց այդպես կամեցողները հեղափոխական ֆրազի մշուշով շղարշում են միայն իրենց թերահավատութունը դեպի մեր շինարարության սոցիալիստական բնույթը: Նրանք անգիտանում են, վոր մեզ համար այսօր սոցիալիզմը «ապագա յերաժշտութուն» չէ արդեն, վոր սոցիալիզմն այսօր «վերացական պատկեր կամ սրբանկարի» հարց չէ այլևս: «Սոցիալիզմն արդեն իսկ հիմա հեռավոր ապագայի

¹⁾ Ленин. Собр. соч. XVI, кн. 442:

հարց չե, ասել ե Լենինը... Սոցիալիզմը մենք ներս ենք քաշել կյանքի առօրյան ե այստեղ ե, վոր պետք ե գլուխ հանենք նրանից: Ահա, թե ինչն ե կազմում մեր որվա խնդիրը, ահա թե ինչն ե կազմում մեր եպոխայի խնդիրը»¹):

Մեզ համար հիմնական խնդիր ե, ի հարկե, աշխատավարձի բարձրացման խնդիրը: Սակայն այդ խնդրի լուծումը մենք կապում ենք տակավին աշխատանքի վորակի բարձրացման, աշխատանքի ընդհանուր արտադրողականության բարձրացման հարցի հետ: Սրանով ե միաժամանակ, վոր մենք չափում ենք այսօր սոցիալիզմի տարած հաղթությունների ծավալը մեր յերկրում ե մեր նվաճումները կոմունիստական հավասարության ճանապարհի վրա: Կարո՞ղ ենք, սակայն, աշխատանքի վորակը կամ նրա արտադրողականությունը բարձրացնելու միջոց դարձնել բանվորների մասնակցությունը մեր արդյունաբերական շահույթին: Նրման խնդիր կարող եյինք դնել, յեթե համարեյինք պետական-արդյունաբերական մեր ձեռնարկությունները պետական-կապիտալիստական ձեռնարկություններ: Նման լողունգ կարող եյինք իրագործել, յեթե գիտակցեյինք, վոր դա մի նոր քայլ ե դեպի հավասարություն, ե վոչ մի միջոց, վոր կարող եր միայն խորացնել աշխատավարձի ուսլ տարբերությունը տարբեր մեծության «շահույթ» տվող արդյունաբերական ձեռնարկներում աշխատող բանվորական ջոկատների միջև: Յեւ վերջապես նման լողունգ կարող եր միտք ունենալ, յեթե նա չմատներ ներկա դեպքում սինդիկալիստական մի մտայնություն, վորը վոչ միայն ընդունակ չե քաղաքական մերձեցում առաջացնելու բանվորի ե գյուղացու միջև, այլև սպառնալ կարող ե այդ մերձեցման ե խանդի ու հակամարտության նոր տարր մտցնել գյուղի ու քաղաքի փոխհարաբերությանց մեջ:

Այստեղ ե հենց սակայն նոր ուղադիրցիայի աքիլեոսյան գարշապարը: Բանվորի ե գյուղացու դաշինքի, ե առաջին հերթին միջակ գյուղացիության թերազնահատման մեջն ենրա բոլոր սըխալների աղբյուրը: Մինչդեռ հենց հեղափոխության այս հիմնա-

¹) Ленин, Собр. соч. XVIII, ч. 2. б. 108:

կան պրորբիմը նկատի ունենալով. Լենինը, յերբ դնում եր ունեոր ու կուլակ տարրերի հարստահարչական ձգտումները սահմանափակելու դեմ միջոցներ ձեռք առնելու խնդիրը: ՆԵՊ-ի սահմանաններում, թե չնայած ՆԵՊ-ին, այս խմաստն ունի Լենինի ձևակերպած «ինչպես», դասակարգային կռիվի այսորվա մեր գործնական մեթոդի, հարցը:

Լենինը դրել է այս հարցը և տվել դրա պատասխանը դեռևս կուսակցության 10-րդ համագումարում. «Յեթե մենք խոսում ենք ազատ շրջանառության մասին, ապա այս նշանակում է անհատական ապրանքափոխանակութուն, այսինքն նշանակում է՝ խրախուսել կուլակներին: Ի՞նչ անենք ապա: Չպետք է անգիտանաք, վոր պարենի մասնատրումը հարկով փոխարինելը նշանակում է այն, վոր կուլակութունը պիտի աճի այս հանրակարգից ել ավելի քան մինչև հիմա: Նա պիտի աճի այնտեղ, վորտեղ առաջ չեր կարող աճել: Բայց սրա դեմ պետք է պայքարել վոչ թե արգելիչ միջոցներով, այլ պետական միավորությամբ և պետական միջոցներով: Յեթե դու կարող ես մեքենաներ տալ պետությանը, ապա դու կը բարձրացնես պետությունը, և չերք դու մեքենաներ տաս կամ ելեքտրոֆիկացիա, այն ժամանակ տասնյակ կամ հարյուր-հազարավոր մանր կուլակներ կը վոչընչանան: Քանի դեռ չես կարող այս տալ, վորոշ քանակությամբ ապրանք տուր: Յեթե ապրանքը քո ձեռքումն է—քո ձեռքումն է իշխանությունը, սակայն կանգնեցնել, սպանել, վերացնել այս հնարավորությունը—նշանակում է խիլ շրջանառության ամեն մի հնարավորություն, այս նշանակում է չբավարարել միջակ դյուղացիությանը¹⁾: Վճիրն է ուրեմն Լենինիզմի հրահանգն այս խնդրում: «Զփոխել հին հասարակական - տնտեսական կերտվածքը, առևտուրը, մանր տնտեսությունը, մանր ձեռներցությունը, կապիտալիզմը, այլ աշխուժացնել առևտուրը, մանր ձեռներցությունը, կապիտալիզմը, զգուշորեն և աստիճանաբար տիրանալով նրանց կամ հնարավորություն ստանալով յեմբարկելու նրանց պեսական կանոնավորման, այնչափ միայն, վորչափ նը-

¹⁾ Ленин, Собр. Соч. XVIII, ч. I, бж 145:

րաճի կաշխուժանան: ¹⁾ Յեւ միաժամանակ՝ «Սոցիալիստական պետարդյունաբերության, պետական վարկային հիմնարկությունների և պրոլետարիատի ձեռքերում գտնվող ուրիշ հրամայող բարձրությունների տնտեսական աճող ղեկավարության ներքո՝ ղեկի կոռպերատիվ կազմակերպություն գրավել ղյուղացիության հիմնական մասսան և ապահովել այդ մասսային սոցիալիստական զարգացում, ոգտագործելով, հաղթահարելով և դուրս մղելով նրա կապիտալիստական տարրերը» (14-րդ կուսհամագումարի վորոշումներից): Ահա վերը ձևակերպված խնդրի հետեւողական լենինյան պատասխանը: «Ով չի հասկանում քաղաքացիական կռիւ լողունգը քաղաքացիական խաղաղության լողունգով փոխարինելու խնդիրը՝ նա ծիծաղելի է, էթե վոչ ավելի վատթար» ²⁾: Ահա նույն խնդրի պատասխանը պրոլետարիատի և գյուղացիության քաղաքական ներկա հարաբերությունների շրջանում: Քաղաքացիական խաղաղությունը սոցիալական խաղաղություն է: Առանց այլեւսլության այն չի վերացնում դասակարգային կռիւը՝ անգամ պրոլետարիատի դիկտատուրայի ներքո: «Պրոլետարիատի դիկտատուրան, — դրում է լենինը, — պրոլետարիատի դասակարգային կռիւ ԵԱՐՈՒՆԱԿՈՒՅՈՒՆԵ Ե ՈՐ ԶԻՔՐՈՒ: Այստեղ է հարցի կենտրոնը, այս է, վոր չեն հասկանում» ³⁾: «Պրոլետարիատի դիկտատուրան նշանակում է համառ պայքար՝ արյունոտ և անարյուն, բռնական և խաղաղ, ռազմական և տնտեսական, մանկավարժական և վարչական պայքար՝ հին հասարակության ուժերի և տրադիցիաների դեմ» ⁴⁾: Վո՞րն է պայքարի այն մեթոդը, վոր պետք է կիրառենք մենք պրոլետարիատի դիկտատուրայի ներկա շրջանում: Այս հարցին պատասխանելու համար անհրաժեշտ է վորոշել մեր պայքարի սոցիալական բովանդակությունը: Հասարակական վո՞ր ուժն է, վորի դեմ կենտրոնացնում ենք այսօր մեր պայքարը սոցիալիզմի ճանապարհին: Անկասկած մանրբութուազիան, մանր բութուական տարրերը: Այդ ուժն է,

¹⁾ Ն. տ. 410:

²⁾ Ն. տ. էջ 339:

³⁾ „Ленинский сборник, III էջ 500:

⁴⁾ Ленин Собр. соч. XVII 136:

վոր պետք է հաղթահարենք, այդ ուժն է, վոր պետք է մտցը-
նենք մեր շինարարության ուղիներին մեջ: Վոչնչացնել այդ դա-
սակարգն այնպես, ինչպես մենք վոչնչացնում եյինք բուրժուա-
զիային և կալվածատերերին, չենք կարող: Այստեղ անհրաժեշտ է
գործադրել պայքարի տարբեր մեթոդ: «Վոչնչացնել դասակարգե-
րը,—գրում է Լենինը,—նշանակում է վոչ միայն արտաքսել կալ-
վածատերերին և կապիտալիստներին,—այդ մենք արեցինք հա-
մեմատարար գյուրին կերպով,—այդ նշանակում է՝ վոչնչացնել,
մահու ապրանքազրոգներին, իսկ նրանց չի կարելի արժափել,
նրանց չի կարելի ճնշել, նրանց հետ պես է համակեցություն
սեղծել, նրանց կարելի չէ (և պետք է) վերակազմել, վերադաս-
տիարակել միայն շատ տևական, դանդաղ, զգուշավոր կազմակեր-
պական աշխատանքի միջոցով»¹⁾: Այստեղ նշած կազմակերպա-
կան աշխատանքի միջոցով է, վոր պետք է հաղթահարենք մեզ
շրջապատող մանր-բուրժուական տարերքը, «խաղաղ» այս մար-
տադաշտն է, վոր փոխադրվում է այսօր պայքարի կենտրոնը:
Պրոլետարիատի դիկտատուրայի ներքո, ըստ Լենինի, մենք ճա-
րուհակում ենք դասակարգային մեր կռիվը, բայց շարունակում
ենք նոր ձեվերով: Վերն է դասակարգային կռիվի այդ ձևը, պայ-
քարի ղլխավոր մեր ճանապարհը պրոլետարիատի դիկտատուրա-
յի ներկա շրջանում: Դասակարգային համագործակցությունը—
ահա Լենինի պատասխանն այդ հարցին: Համագործակցության
հիմունքով և միաժամանակ համագործակցության ձևով է, վոր
շարունակում ենք ներկայիս դասակարգային մեր կռիվը մանր
բուրժուազիայի, մանր բուրժուական տարերքի դեմ: Համագոր-
ծակցության հիմունքով և համագործակցության ձևով է, վոր
ներկայիս պիտի հաղթահարենք գյուղի կապիտալիստական տա-
րերքը, դարձնենք գյուղի հիմնական մասսան և նրա զարգաց-
ման տարերքը լծակ սոցիալիզմի նախապատրաստության հա-
մար: Վերջին նպատակի համար է, վոր պայքարելով նեպման-
ների դեմ, վորոշ սահմաններում խոսում ենք անգամ նրանց մեզ
համագործակցելու, նրանց ոգտագործելու մասին: Յեվ սա հե-

¹⁾Ն. տ. հջ 135 և հետ:

տեվոդական եւ և հասկանալի այն տեսակետից, վոր ներկա շրջանում պայքարող ուժերի հարաբերությունը հիմնականում փոխվել եւ հոգուաւ պրոլետարիատի և նշանակում եւ, բնականաբար, հիմնականում պիտի փոխվեն նաեւ պայքարի մեթոդները:

Հարստահարիչ դասակարգերի քաղաքական իշխանությունը տապալելուց հետո, արտադրութեան հիմնական միջոցները պրոլետարիատի պետական իշխանութեանը յենթարկելուց հետո՝ մեր վարած դասակարգային կռիւի իմաստը կենտրոնանում եւ հիմաստցիալիզմի տնտեսական շինարարութեան խնդրի շուրջը, կուլտուրական այն հեղափոխութեան շուրջը՝ վորի միջոցով եւ միայն հնարավոր ամրացնել կառուցվող սոցիալիզմի արտադրական պատվանդանը: «Մենք հարկադրված ենք խոստովանելու—գրել եւ լենինը 1923 թվին—մեր ամբողջ տեսակետի արմատական փոփոխությունը սոցիալիզմի մասին: Այդ արմատական փոփոխութեանն այն եւ, վոր առաջ մենք ծանրութեան կենտրոնը դնում էյինք և պետք եւ դնելինք քաղաքական կռիւի, հեղափոխութեան, իշխանությունը նվաճելու վրա և այլն: Իսկ հիմա ծանրութեան կենտրոնը փոխվում եւ և մինչ այն աստիճան, վոր փոխանցվում եւ խաղաղ կազմակերպական կուլտուրական աշխատանքին¹):

Կարգավորել աստիճանաբար բանվորութեան և գյուղացիական մասսայի դասակարգային փոխհարաբերությունները, յենթարկելով այդ մասսան պրոլետարիատի սիստեմական ղեկավարութեանը և այդ միջոցով՝ առաջնորդել մեր այսորվա հանրակարգի փոխանցումը դեպի անդասակարգ սոցիալիստական հանրակարգը: Ահա այն քաղաքականությունը, վոր ապահովելով սոցիալիզմի տնտեսական շինարարությունը, ի վիճակի կը լինի միաժամանակ ապահովել մեր չերկրում նրա հաղթանակը՝ միջազգային-հեղափոխական ուժերի աճման մեր դարաշրջանում՝ անգամ, յեթե հապաղի տակավին սոցիալիզմի անմիջական հաղթութեանը կապիտալիզմի առաջավոր յերկիրներում: Սա յեմիակ յեզրակացութեանը, վոր պետք եւ քաղենք կուսակցութեանը թողած լենինի բոլոր պատգամներին:

¹) Ленин, Собр. соч. XVIII ч. 2. № 144:

«ՎԵՐԱՍԵՐՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ» ՅԵՎ ԼԵՆԻՆԻԶՄԸ

Հնարավոր է արդյոք և անխուսափելի մեր «վերասերումը», հնարավոր է և անխուսափելի կուսակցության և խորհրդային իշխանության Տերմիդորը:

Այս հարցին ևս գոյություն ունի Լենինի սպառիչ պատասխանը: «Վերասերման» մասին կուսակցության 11-րդ համագումարին եր, վոր Լենինը հայտարարեց՝

«Պետք է ասել՝ այդպիսի բան... **հնարավոր է:** Պատմություն մեջ չեղել են ամեն տեսակի կերպարանափոխություններ: Հույս դնել համոզվածության, նվիրվածության և հոգեկան ուրիշ գերազանց հատկությունների վրա՝ քաղաքականության մեջ դա բոլորովին լուրջ բան չէ: Հոգեկան գերազանց հատկություններ ունենում են փոքրաթիվ մարդիկ, մինչդեռ պատմական յիշքը վորոշում են վիթխարի մասսաները, և չեթե փոքրաթիվ մարդիկը չեն համապատասխանում նրանց, չերեմն այդ փոքրաթիվ մարդկանց հետ շատ ել քաղաքավարի չեն վարվում»¹⁾:

Նույն միտքն եր զարգացնում Լենինը նույն համագումարին, չերբ խոսում եր մեր պետական ապարատի մասին:

«... պետությունը մեր ձեռքումն է, բայց նոր տնտեսական քաղաքականության խնդրում գործել է նա այս տարի մեր ուղածին պես: Վոչ: Նա չի գործել մեր ուղածին պես: Իսկ ինչպես է գործել նա: Մեքենան դուրս է պրծնում մեր ձեռներից. կարծես նստած է մի մարդ, վորը վարում է նրան, իսկ մեքենան չի գնում այնտեղ, ուր ուղղում են նրան, այլ այնտեղ, ուր ուղղում է մեկը, չես իմանում՝ անլեգալը, ապորինին, աստված գիտե, թե վորտեղից վերցրածը, մասնատիրական կապիտալիստները, թե՛ մեկն ու մյուսները միասին: Մեքենան չի գնում ըստ ամենայնի այնպես, իսկ շատ հաճախ բնավ այնպես չի գնում, ինչպես չերևակայում է այն մեկը, վորը նստած է նրա դեկի մոտ»²⁾:

¹⁾ Ленин, Собр. соч. том. XVIII. ч. 2, № 41:

²⁾ Ն. տ. № 36 և հետ:

Լենինն այսպիսով հնարավոր է համարում և՛ կուսակցության, և՛ պետության վերասերումը, նրանց՝ ոտար նպատակներին նպաստավոր ուղեգնացությունը: Բայց դրա հնարավորության աղբյուրը նա չի փնտրում ղեկավարների հոգեկան, կառուցվածքի, այլ մասսաների մեջ, դասակարգերի փոխհարաբերության շրջանում: Պետք է, նշանակում է, չեղակետ ունենալ հասարակական զարգացման ընթացքը, պետք է հաշվի առնել դասակարգերի փոխհարաբերություններն ու դրանց զարգացման հնարավոր ուղիները, վորոշելու համար կուսակցության կամ պետության վերասերման անխուսափելիությունը: Ահա Լենինի մերձեցումն այս խնդրում:

Կոնկրետ դնելով հարցը մեր կուսակցության և պետականության, նրանց զարգացման հնարավոր ուղիների, նրանց պառակտման մասին, Բանգյուղտեսչության վերակազմությունը նշվիրած իր հոգվածի մեջ Լենինը գրում է՝

«Ի հարկե, մեր Պորհրդային Հանրապետության մեջ հանրակարգը հիմնված է յերկու դասակարգերի՝ բանվորների և գյուղացիների համագործակցության վրա, վորին հայտնի պայմաններով կցվում են ներկայիս նաև «նեպմանները», այսինքն, բուրժուազիան: Յեթե առաջնան դասակարգային լուրջ տարաձայնություններ այս դասակարգերի միջև, այն ժամանակ պառակտումն անխուսափելի կը լինի, բայց մեր հանրակարգի մեջ անհրաժեշտորեն չեն զրված այդպիսի պառակտման հիմքեր»: Սա նշանակում է՝ պառակտումն որչեկսիվորեն հնարավոր է, բայց դա բնավ անհրաժեշտ չէ: Ամեն ինչ կախված է նրանից, թե վոր չափով կարող կը լինենք մենք հաշվի առնել զարգացման որչեկտիվ ընթացքը և տալ նրան մեզ ցանկալի ուղղությունը: Այս նկատառումով է, վոր Լենինը գլխավոր մեր խնդիրն է համարում՝ «ուշադիր հետևել ու կանխել այն հանգամանքները, վորոնցից կարող է պառակտում առաջ գալ, քանի վոր վերջին հաշվով մեր Հանրապետության բաղդը կախված է լինելու նրանից—կը գնա՞ արդյոք գյուղացիական մասսան բանվոր դասակարգի հետ, հավատարմություն սահպանելով նրա հետ կնքած դաշինքին, թե նա թույլ կտա «նեպմաններին», այսինքն՝ նոր

բուրժուազիային, բաժանել իրեն բանվորներին, պառակտել իրեն նրանցից: Վորքան պարզ տեսնենք մեր առջև այս չերկուտեսակի յեղքը, վորքան պարզ հասկոնան այս բոլորը մեր բանվորներն ու գյուղացիները, այնքան ավելի շանս կունենանք, վոր մեզ կը հաջողվի խուսափել պառակտումից, վորը կործանարար կարող եր լինել Խորհրդային Հանրապետության համար»¹⁾:

Մեր այսօրվա պայքարն այսպիսով կարող ե ունենալ յեկու տեսակ յեղք և վոչ՝ մի՝ յեղք՝ ինչպես պնդում են մեզ անխուսափելի պարտություն գուշակող հակառակորդները: «Կը կադմակերպենք արդյոք մենք մանր գյուղացիությունը նրա արտադրական ուժերի զարգացման հիմունքով, ռժանդակելով այդ զարգացմանը պրոլետարական իշխանության միջոցով, թե նրան իրենց կենթարկեն կապիտալիստները—սրանից ե կախված պայքարի յեղքը»²⁾: Վորն ե լինելու այսօրվա մեր պայքարի չերկուտեսակ յեղքից անխուսափելին. այդ հարցի պատասխանը կախված ե մեզնից, մեր քաղաքականության ընթացից: Ամեն ինչ կախված ե նրանից, թե վորքան ուղիղ կարող ենք տանել մենք քաղաքական մեր գիծը:

«10—20 տարի ուղիղ փոխհարաբերություն գյուղացիության հետ և ապահովված ե հաղթանակը համաշխարհային մասշտաբով՝ անգամ յեթե դանդաղելու լինեն պրոլետարական հեղափոխությունները, վոր աճում են, այլապես՝ 20—40 տարվա բելովարդիական տերրորի տանջանքներ». այսպես եր գրում էին ինքնը տակավին 1921 թվին, նոր տնտեսական քաղաքականության առաջին շրջանում³⁾:

Այս դիտողություններից հետո հարց ե առաջ գալիս՝ կամ վորեն կոկնրես առիթ չերկմտանքի համար, կամ վորեն կոկնրես հիմք գուշակելու կուսակցության վերասերում, խորհրդային իշխանության Տերմիդոր:

Ինչ եր Տերմիդորը:

Տերմիդորը ֆրանսական հեղափոխության որացուցի մեջ

1) Ն. տ. հջ 124:

2) Ленин, Собр. соч. XVIII, ч. I, հջ 377:

3) Տես «Большевик», 1925 թ. № 7, հջ 76:

հատուկ ամսանուն է: Սակայն ներկա դեպքում նա ունի քաղաքական անանձին իմաստ: Ֆրանսական հեղափոխության յերկրորդ տարվա Տերմիդորի 9-ին, մեր հաշվով՝ 1794 թվի հուլիսի 27-ին, Ռոբեսպիերի սպանության օրը, իշխանությունը հեղափոխական դեմոկրատիայի ձեռքից ընկնում է և փոխանցվում բուրժուազիային: Խոսելով Տերմիդորի մասին՝ մեր հակառակորդները նրկատի ունեն մեր հեղափոխության զարգացման այն շրջակեալը, յերբ նա, ինչպես յենթադրում են, դուրս գալով իր պրոլետարական հունից՝ պիտի ստանա բուրժուական-դեմոկրատական ընթացք: Վորքան հիմք ունի սակայն պրոլետարական Տերմիդորի այդ նախատեսությունը, և վորքան տեղին՝ նոր ուղղուղիայի ներկայացուցիչներից վոմանց դիտողությունը մեր կուսակցության կենտկոմի... «տերմիդորականության» վտանգին յենթարկված լինելու մասին:

Ֆրանսական հեղափոխությունը ծայր առավ ագրարային ճգնաժամից: Այդ ճգնամամը լուծվեց հողեր և աշխարհիկ կալվածատիրության հողերի բռնագրավման ակտով: Երականն այն է սակայն, վոր հողերի ցացիոնալիզացիայի փոխարեն այստեղ տեղի ունեցավ ու կարող եր տեղի ունենալ միայն նրանց պարզելիզացիա, մասնահատում: Անհող և սակավահող գեղջուկը դարձավ իրեն հատկացված հողաբաժնի սեպհականատերը: Մյուս կողմից, հեղափոխությունը, շրջափակված բուրժուական դեմոկրատիայի սահմաններում, վոչ միայն ձեռք չտվեց բուրժուական սեպհականությանը, մասնավոր առևտրին ու գործարաններին, այլ և նպաստեց նրանց զարգացմանը՝ մասնատիրական կապիտալիզմի ռելսերի վրա: Այդպիսով և՛ գյուղում, և՛ քաղաքում պետությունը վոչնչի տեր չեր գրեթե: Տնտեսության հրամայող բարձրությունները մնում եյին մասնավորների ձեռքում: Իսկ սա, կապիտալիզմի անկաշկանդ զարգացման պայմաններում ու բացառապես կապիտալիստական տնտեսության տարերքին սպասարկող պետականության մեջ, նշանակում եր և կարող եր նշանակել գյուղի յեվ քաղաքի մասնավոր սեպհականացիոնալ զոդումն՝ կապիտալիստական բուրժուազիայի հեգեմոնիայի ցերեք: 18-րդ դարի վերջում պրոլետարիատը դեռ չափազանց թույլ

եր քանակով և վորակով: Նա չուներ իր ուրույն դասակարգա-
լին կազմակերպությունները, նա չուներ նաև քաղաքական ու-
րույն կազմակերպություն՝ կուսակցություն: Նրա դիկտատուրա-
յի մասին խոսք չեր կարող լինել տակավին: Դրա համար չկա-
յին տնտեսական, ինչպես նաև միջազգային-քաղաքական նախա-
տվյալներ: Չունենալով իր ձեռքին իշխանության ղեկը, չձգտե-
լով անգամ իշխանության, հեղափոխության ընթացքում պրոլե-
տարիատը գտնվում էր ամբողջովին մանր-բուրժուական ղեմո-
կրատիայի՝ յակոբինյաների ղեկավարության ներքո: Մակայն կա-
րող ելին սրանք տնորինել տևականորեն հեղափոխության ճա-
կատագիրը: Զարգացող կապիտալիզմը չե թե հավաքում ու կազ-
մակերպում, այլ քայքայում ու կազմալուծում եր մանր-բուր-
ժուազիայի քաղաքական եներգիան: Կապիտալիստական աճող
բուրժուազիայի շահերի թարգման դիրեկտորիումը չեկավ վերջ
տալու հեղափոխական մանր բուրժուազիայի յակոբինյաների քա-
ղաքական իշխանությանն ու ճանապարհ հարթելու Նապոլեոն
Բոնապարտի դիկտատուրայի համար:

«Մանր-բուրժուազիայի բոլոր փորձերն ընդհանրապես և
գլուղացիությանը մասնավորապես, գիտակցելու իր ուժը, յուրո-
վին ընթացք տալու եկոնոմիկային և քաղաքականությանը, սը-
նանկությամը են վերջացել: Կամ պրոլետարիատի ղեկավարու-
թյամբ, կամ կապիտալիստների ղեկավարությամբ—միջին ճանա-
պարհ չկա: Բոլոր նրանք, ովքեր չերազում են դեռ դրա մասին,
դատարկ յերազողներ են, ֆանտազյորներ: Նրանց հերքում է
քաղաքականությունը, եկոնոմիկան և պատմությունը: Մարքսի
ամբողջ ուսմունքը ցույց է տալիս, վոր յերբ մանր տնտեսա-
րը արտադրության միջոցների և հողի տերն է, այդ դեպքում
նրանց միջև տեղի ունեցող փոխանակությունից անպատճառ կը
բուսնի կապիտալը, իսկ դրա հետ մեկտեղ՝ կապիտալի և աշխա-
տանքի հակասությունը... Տնտեսական այս հիմնական փաստերից
բղխում է նաև այն, թե ինչու չի կարող այդ ուժը յերևան գալ
ինքնուրույն կերպով, և թե ինչու չեն այդպիսի փորձերը բոլոր
հեղափոխությունների պատմության մեջ սնանկությամբ վերջա-
ցել: Վորչա՞վ պրոլետարիատին չի հաջողվել ղեկավարել հեղափո-

խությունը՝ այդ ուժը չենթարկվում և միշտ բուրժուազիայի դե-
կամարությանը»¹⁾։

Այս յերևութը Լենինը վերջին 150 տարվա ընթացքում բու-
լոր հեղափոխությունների բնորոշ կողմն և համարում։ Յեւ ար-
դյոք չի՞ տվել նույն յերևութի դասական որինակը հենց Ֆրան-
սական մեծ հեղափոխությունը։ Յեւ հենց այս կետում չե՞ մեր
և Ֆրանսական հեղափոխության տարբերությունը։

«Յակորինները, գրել և Լենինը 1917 թվին, տվեցին Ֆրան-
սիային դեմոկրատական հեղափոխության և հանրապետության
դեմ նյութած մոնարխների կոալիցիան հետ մղելու լավագույն
որինակները։ Լիակատար հաղթանակ չեր վիճակված յակորիննե-
րին, գլխավորապես այն պատճառով, վոր 18-րդ դարի Ֆրան-
սիան ցամաքի վրա շրջապատված եր չափազանց հետամնաց յեր-
կիրներով, և այն պատճառով, վոր Ֆրանսիայի մեջ նյութական
հիմքեր չկալին սոցիալիզմի համար, չկային բանկեր, կապիտա-
լիստների սինդիկատներ, մեքենական ինդուստրիա, յերկաթու-
ղիներ։ Յակորինությունը Յեւրոպայում կամ Յեւրոպայի ու Ա-
սիայի սահմանագծի վրա 20-րդ դարում—դա կլիներ հեղափո-
խական դասակարգի, պրոլետարիատի իշխանություն, վոր ոժան-
դակութուն գտնելով ամենաչքավոր գյուղացիության կողմից և
հենվելով սոցիալիստական շարժման նյութական առձեռն հիմքե-
րի վրա, կարող կլիներ վոչ միայն անել բոլոր այն մեծագոր-
ծությունը, մնայունը, անմոռանալին, ինչ արեցին 18-րդ դարի
յակորինները, այլև համաշխարհային մասշտաբով ձեռք բերել աշ-
խատավորների ապահով հաղթությունը»²⁾։ «Բուրժուական հե-
ղափոխությունների մեջ—գրում եր Լենինը 1918 թվին—աշխա-
տավոր մասսաների գլխավոր խնդիրն եր ֆեոդալիզմը, մոնար-
խիան, միջնադարականությունը վոչնչացնելու բացասական կամ
կործանարար աշխատանք կատարել։ Նոր հասարակություն կազ-
մակերպելու դրական կամ ստեղծարար աշխատանքը կատարում
եր ազգաբնակչության ունեւոր, բուրժուական փոքրամասնու-
թյունը։ Յեւ նա լուծում եր այդ խնդիրը, չնայած բանավորների

¹⁾ Ленин. Собр. соч. XIV ч. I бж 287։

²⁾ Ленин Собр. соч. XVIII ч. I, бж 178 և հետ։

և ամենից չքավոր գյուղացիների դիմադրության, համեմատաբար դուրսին կերպով՝ վոչ միայն այն պատճառով, վոր կապիտալի կողմից շահագործվող մասսաների դիմադրությունը ծայրաստիճանի թուլի եր այն ժամանակ, շնորհիվ նրանց ցրվածության և անզարգացած դրության, այլ և այն պատճառով, վոր անարխիկորեն կառուցված կապիտալիստական հասարակության կազմակերպող ուժը զարգացման իր ընթացքով լայնացող ու խորացող ազգային ու միջազգային շուկան ե»¹⁾։ Մեր հեղափոխությունն, ընդհակառակը, կարող է լուծել իրեն առաջադրած դրական, ստեղծարար խնդիրները մասսաների միջոցով։ «Այսպիսի հեղափոխությունը կարող է հաջողությամբ իրագործվել միայն բնակչության մեծ մասի, ամենից առաջ աշխատավորության մեծամասնության, ինքնուրույն պատմական ստեղծագործության դեպքում։ Սոցիալիստական հեղափոխության հաղթանակն ապահովված կլինի միայն այն դեպքում, յերբ պրոլետարիատը և ամենից չքավոր գյուղացիությունը կարող կլինեն ձեռք բերել բավականաչափ գիտակցականություն, գաղափարականություն, անձոհություն, տոկունություն»²⁾։

Հաշվի առնելով հեղափոխության ներքին ուժերը, լեռններ, միջպես տեսանք, աչքաթող չեր անում նաև նրա արտաքին գործոնները ֆրանսական ու մեր հեղափոխությունների մեջ. «Յերբ պայքարի մեջ կործանվեցին ֆրանսական բուրժուական մեծ հեղափոխականները, կործանվեցին մեկուսի, նրանք ոժանդակություն չունեցին մյուս չերկիրներում։ Նրանց դեմ սպառազինվեցին չեվրոպական բոլոր պետությունները և առաջին հերթին՝ առաջավոր Անգլիան։ Մեր հեղափոխությունը հիմա, ընդամենը բալշևիկյան իշխանության մեկ ու կես տարուց հետո, ունի այն նրվաճումը, վոր նոր պետական կազմակերպությունը, վորը ստեղծել է նա, հասկանալի յե դարձել ամբողջ աշխարհի բանվորներին, ծանոթություն, ժողովրդականություն ձեռք բերել նրանց, մեջ, հարազատացել նրանց»³⁾։

1) Ленин. Собр. соч. XV, бж 194:

2) Ն. տ. 194 և հետո:

3) Ленин, Собр. соч. XVI, бж 222:

Պարզ է, թե վորքան անտեղի յե Տերմիդորի վերհուշը մեր հեղափոխության պրոգնոզի տեսակետից: Ֆրանսիայում քաղաքական վերասերումը վոչ միայն հնարավոր եր հեղափոխական մանր-բուրժուազիայի համար, այլ յե՛վ՝ անխուսափելի: Մեղանում իշխանության վերասերում հնարավոր է, բայց վոչ անհրաժեշտ: Յե՛վ սա հասկանալի չէ: Իշխանությունը մեզ մոտ մանր-բուրժուազիայի ձեռքումը չէ, այլ՝ պրոլետարիատի: Վոչ թե մանր-բուրժուազիան է քաշում իր հետևից պրոլետարիատին, այլ պրոլետարիատը՝ մանր-բուրժուազիային: Պրոլետարիատի ղեկավարության իշխում է մեր տնտեսության գերիշխող բարձրություններին: Արտադրական ուժերի զարգացումը պրոլետարիատի ղեկավարության ներքո հնարավորություն է տալիս նրան դնել յերկրի ալիք տեսական զարգացումը սոցիալիստական ռեևերի վրա, ստեղծել նյութական նախապայմաններ պրոլետարիատի և գյուղացիության քաղաքական դաշինքի համար: Վոչ մի «ուղիղ քաղաքականություն» չեր կարող փրկել Ֆրանսական մանր բուրժուազիայի իշխանությունը խորտակման ստույգ անհրաժեշտությունից: Մինչդեռ, ընդհակառակը, մեր հաղթանակը հնարավոր է և կախված է միայն նրանից, թե վո՞ր չափով կարող կլինենք մեր վերելքի ճանապարհին ուղիղ փաղափականություն ճանել գյուղացիության հանդեպ: «Կամ մենք կենթարկենք մեր կոնտրոլին ու հաշվառքին մանր-բուրժուային (մենք կարող ենք անել այդ, չե՛թե կազմակերպենք չքավորությունը. այսինքն բնակչության կամ կիսապրոլետարների մեծամասնությունը՝ գիտակից պրոլետարական ավանգարդի շուրջը), կամ նա կտապալի մեր բանվորական իշխանությունն անխուսափորեն և անհրաժեշտաբար, ինչպես տապալել են հեղափոխությունը Նապոլեոններն ու Կապենյակները, վորոնք հենց այս մանր սեփականատիրական հողի վրա յել բուսնում են»¹⁾: Լենինն ասել է այս խոսքերը 1918 թվի ապրիլին, չե՛լակետ ունենալով այն ժամանակվա դասակարգային փոխհարաբերությունները պրոլետարիատի և բնակչության այն ժամանակվա մեծամասնության միջև: Հետագայում, տեսանք, դասա-

¹⁾ Ленин, Собр. соч. XV, кн. 265:

կարգային փոխհարաբերություններն առաջին պլանի վրա դրին միջակ գյուղացիությունը, վոր կազմում եր հիմա գյուղի բնակչության մեծամասնությունը, գյուղատնտեսության «կենտրոնական ֆիգուրան»։ Դրա հետ մեկտեղ, 1917—1918 թվերին արած դիտողությունները մեր հաղթանակի սոցիալական հիմնապայմանների մասին պահպանում են իրենց ուժն առաջին հերթին հենց միջակ գյուղացու նկատմամբ։ Գյուղի բնակչության այդ մասսան ե, վոր պետք ե կազմակերպենք պրոլետարական ավանգարդի շուրջը, վոչ միայն մեր վերահսկողության ու հաշվառքին յենթարկելու, այլև նրա տնտեսական-հասարակական զարգացումը մեր սոցիալիստական եվոլյուցիայի հեռանկարների հետ շաղկապելու համար։

8.

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Կռվելով վերասերման որչեկտիվ ֆակտորների դեմ, մենք չենք կարող միաժամանակ չպայքարել բոլոր այն գործոնների դեմ, վոր կարող են աղճատել պրոլետարիատի դիկտատուրայի և պրոլետարական ավանգարդի քաղաքականությունը ներսից, պետական ու կուսակցական որդանների աստիճանական վերասերման ճանապարհով։ Այս վտանգը գոյություն ունի և չի կարող գոյություն չունենալ մեզ համար, մանավանդ հիմա, ՆԵՊ-ի ժամանակ, յերբ տանում ենք մեր աշխատանքը շրջապատված մանր բուրժուական տարերքով, և յերբ այդ տարերքը փորձում ե սողոսկել անդամ մեր պետական ապարատն ու կուսակցական շարքերը՝ հեղափոխության դիրքերը ներսից պայթեցնելու համար։ Զուր չե, վոր Լենինն այնքան կատաղի պայքարում եր պետական մեր որդանների բյուրոկրատացման դեմ, զուր չե, վոր ՆԵՊ-ի կիրառման առաջին իսկ տարում նա դրեց կուսակցության մաքրագործման խնդիրը, մաքրագործում, վոր պիտի դուրս շարտեր մեր շարքերից մանր-բուրժուական, մանր-բուրժուական-անարխիստական» տարերքի ազդեցությանը յենթադրելու ելնմենտներին։ Այդ միջոցով ե, վոր պետք ե ավելի ևս հզորանար կուսակցու-

թյունը, վորպես պրոլետարական ավանգարդ, ավելի ևս ամուր
շաղկապվել հարազատ դասակարգի ամբողջության հետ և ավելի
մեծ ունակություն ձեռք բերել, ղեկավարելու մեզ շրջապատող
դժվարությունների ու վտանգների հաղթահարման աշխատանքը»¹):
Վոչ պակաս մտահոգությամբ վերջին իր հոգվածներում Լենինը
դնում էր նաև մեր պետական ապարատի բարելավման, նրա
վերակազմության խնդիրը: «Միայն մեր ապարատի մաքսիմալ
մաքրագործման միջոցով, մաքսիմալ չափերով կրճատելով այն
բոլորը, ինչ բացարձակորեն անհրաժեշտ չե նրա մեջ, մենք կա-
րող կլինենք դիմանալ ստուգապես»: Սա չեր Լենինի վերջին
խոսքը մեր պետական ապարատի մասին²):

Բայց մենք ապահովագրում ենք մեզ վոչ միայն ոտար և
անհարազատ տարրերը մեր ապարատներից և որգաններից վտա-
րելու ճանապարհով, այլև նույն այդ որգանների և ապարատ-
ների մեջ սոցիալապես մեզ հարազատ կամ մոտ տարրերը զորե-
ղացնելու միջոցով: Մենք ամբացնում ենք կուսակցության սո-
ցիալական կազմը՝ նրա շարքերն առնելով բանվորության լայն
շերտերը: Մենք պայքարում ենք կուսակցական ու պետական
ապարատների և որգանների բյուրոկրատացման վտանգի դեմ՝
ղեկավար գիւրեթի վրա զննելով բանվորական ակտիվը և չքավոր
ու միջակ գյուղացիության լավագույն տարրերին: Ներկուսակցա-
կան գեմոկրատիան և խորհուրդների, պրոֆմիությունների, կոո-
պերատիվների, կոմսոմոլիստական կազմակերպությունների մեջ
մասսայական աշխատանքի աշխուժացման լողունգների կիրա-
ռումը լավագույն միջոցներն են հայթայթում մեզ՝ բանվոր-գյու-
ղացիական մասսաների առաջ քաշման տեսակետից և կուսակցական
պետական և խորհրդային-հասարակական կազմակերպություննե-
րի ու հիմնարկների վերասերման վտանգը վերացնելու համար:

Բայց գիտակցելով այդ, լուծելով այդ ուղղությամբ մեզ ա-
ռաջադրվող մոմենտի խնդիրները՝ չենք կարող միաժամանակ չը
գիտակցել, վոր մասսայական աշխատանքը կարող կլինի տալ դրա-
կան արդյունքներ միայն կուսակցության սխտեմական և ան-

¹ Հմմ. Ленин, Собр. соч. XVIII ч. 1, б. 360 և հետ:

² Ленин. Собр. соч. XVIII ч. 2, б. 138:

սայթաք ղեկավարութեան պայմանով: Չպետք է մոռանալ, Վոր ներկայիս արդյունաբերական մեր կենտրոններում բանվորութեան նոր կադրերն աճում են գլխավորապէս ի հաշիվ գյուղացիութեան, Վոր գյուղից քաղաք փոխադրվող բանվորական նոր շերտերը կարոտ են տակավին քաղաքական վերադաստիարակութեան մասսայական լայն կազմակերպութիւնների մեջ: «90 տոկոսով» կուսակցութեան շարքերն անցնելուց առաջ, պետական որգանների ղեկավար դիրքերին մոտենալուց առաջ՝ բանվորութեան նոր շերտերը պետք է Վոր անցնեն նախապէս «Լոմունիզմի դպրոցները», ինչպիսիք են, առաջին հերթին Լոմսոմոլն ու պրոֆմիութիւնները: Այդ դպրոցներում է, Վոր քաղաքականորեն ու գործնապէս պիտի կոմիւլի, կազմակերպվի Լենինի կուսակցութեան ռեզերվը այն մասսան, Վոր արտադրական աշխատանքի ու հեղափոխական պայքարների մեջ մարզված բանվորական հին կադրերի և կուսակցական հին գվարդիայի ղեկավարութեամբ պիտի կազմի վաղը կուսակցութեան ամուր վողնաշարը:

Յեւ հենց այս տեսակետից սխալ և հիմնովին անհեթեթ մի մտահղացում էր, յերբ, պալքարելով «վերասերման» վտանգի դեմ, նոր ոսպորդիցիայի ղեկավարները հակադրում էին կուսակցութեան ռեզերվը նրա կադրերին կամ սուղարկում էին փաստորեն լուծել պրոլետարական ամանգարդը կուսակցութեան ռեզերվի մեջ, վերացնելով այսպիսով կուսակցութեան և դասակարգի տարբերութիւնը: Նույնքան անհեթեթ առաջարկ չէր, յերբ խեղաթյուրելով կուսակցութեան լենինյան միասնութեան գաղափարը, ոգնութեան էին կանչում կուսակցական շիւ ու թեք վարքագծի համար դատապարտված ֆրակցիաների յերբեմնի ղեկավարներին: Նոր ոսպորդիցիայի ղեկավարները մոռանում էին դրանով, Վոր այսօր իսկ շատ խոշոր չափով պահպանում է իր նշանակութիւնը կուսակցական կազմակերպական խնդիրներում այն հրահանգը, Վոր Մոլոտովին ուղղած մի նամակում տվել է Լենինը կուսակցութեան Կենտկոմին 1922 թվին, 11-րդ կուսհամագումարի նախորելին: ¹⁾ Յեւ մանավանդ պահպանում է այսօր իսկ իր լիա-

¹⁾ Հմմ. XIV с'езд РКП (б.) Вюллетень № 5, էջ 68 և հետ.:

կատար ուժն այն միտքը, վոր շեշտել ե իր այդ հրահանգի մեջ ընկ. Լենինը կուսակցության հիմ գվարդիայի մասին. «Յեթե չգոցենք մեր աչքերն իրականության հանդեպ—գրում ե իր նամակում ընկ. Լենինը—այդ դեպքում պետք ե խոստովանել, վոր ներկայիս կուսակցության պրոլետարական քաղաքականության վորոշողը վոչ թե նրա կազմն ե, այլ հսկայական անբաժան հեղինակությունն այն նրբագույն շերտի, վոր կարելի չե կոչել կուսակցական հին գվարդիա: Բավական ե մի փոքր ներքին պայքար այդ շերտի մեջ, և նրա հեղինակությունը կարող ե, չեթե վոչ ընկնել, գեթ թուլանալ այնչափ, վոր վորոշումն այլևս այդ շերտից չլինի կախված ¹⁾: Այսքան բարձր տեղ հատկացնելով կուսակցության ղեկավարության խնդրին, պարզ ե միաժամանակ, վոր անհնարին ե ապահովել կուսակցության դիպցիպլինը, նրա միասնությունը, չեթե կուսակցության ղեկավարությունը հանձնարարվի «կարծիքների պարլամենտին», չեթե պրոլետարիատի դիկտատուրայի պայմաններում կուսակցության ղեկավարությունը, վողջ կազմակերպությունը, չապահովագրի իրեն ֆրակցիաների և խմբավորումների ազդեցությունից: Այդ ճիշտ ե մանավանդ մեր պայմաններում, չերբ պրոլետարիատը կոչված ե տանելու իր հետևից մանր-բուրժուազիայի յերերուն մասսան. «18, 19 և 20-րդ դարերի բոլոր հեղափոխությունների բոլոր փորձը—գրել ե Լենինը—ցույց ե տվել անփիճելի պարզությամբ և ամենից համոզիչ կերպով—վոր վոչինչ այլ բան, քան կապիտալիստների և կալվածատերերի իշխանության ռեստավրացիա չի կարող ստացվի այդ տատանումներից, չեթե տեղի ունենա պրոլետարիատի հեղափոխական ավանգարդի միասնության, ուժի և ազդեցության թուլացում» ²⁾:

* * *

Ներկուսակցական պայքարը պիտի վերջացած համարել: Կուսակցության 14-րդ համագումարը դատապարտեց նոր ոպպոզի-


¹⁾ Ն. տ. էջ 70:


²⁾ Ленин, Собр. соч. XVIII ч. 1, էջ 165 և հետ.:


ցիւայի բոլոր շեղումները, տալով նրա հարուցած հարցերի լենինյան պատասխանը: Լենինգրադի կուսակցական մասսաները, գործարանային կուսակցական բանվորները, հարյուրավոր բեզոլցուցիաներով վողջունեցին կուսակցութեան 14-րդ համագումարի ընդունած վորոշումները՝ դատապարտելով նույն համագումարի ժամանակ նոր օպպոզիցիան ներկայացնող Լենինգրադի պատգամավորութեան դիրքը: Լենինգրադի կուսկազմակերպութեան 13-րդ կոնֆերանսը, թարգման հանդիսանալով կուսակցական մասսաների ընդհանուր տրամադրութեան, միացաւ ըստ ամենայնի 14-րդ կուսհամագումարի ընդունած ուղեգծին:


Սրանով, ի հարկե, կուսակցութեանը չի ապահովւած մեկընդմիշտ նորանոր թեքումներից, ներկուսակցական վարանումներից ու դեգերումներից: Նոր տնտեսական քաղաքականութեան պայմաններում դրանք «վերադիր ծախսեր» են, վորոնցից չի կարող տակաւին խուսափել կուսակցութեանը՝ ընդհանուր վերելքի ճանապարհին հանդիպած դժվարութեւոյնները վերացնելու և քաղաքական ուղեգիծը ճշտելու համար:

Քաղաքական լենինյան վարքագծով և այդ վարքագծի գործնական ճշտումներով է, վոր կարող կլինենք կանխել կամ վերացնել բոլոր այդ վարանումները և հաղթահարել հանդիպող դժվարութեւոյնները: Կուսակցութեան յերկաթե դիսցիպլինը, նրա լենինյան միասնութեւոյնը, մեր վարանումներն ու մեզ հանդիպած դժվարութեւոյնները հաղթահարելու գլխավոր յերաշխիքն է:









-044.

5K1132


2-85

Լ Ո Ւ Յ Ս Ե Ն Տ Ե Ս Ե Լ

Նույն հեղինակի

1. Դաշնակցությունը և պատերազմը, 1924 (սպառնալից)
2. Գաղութահայ խնդիրներ, 1925 (սպառնալից)
3. Պրոլետարական հեղափոխությունը և ուսուցչությունը, 1925 զինն է 10
4. Մեր պայքարը, նվաճումները և անելիքը, 1925, զինն է 30
5. Համազգային կրիզիսը, 1926, զինն է 15
6. Կոմսոմոլի զարգացման ուղիները, 1926, զինն է. 20





ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0019509

ЦЕНА

7808